AZG NEW PDF.qxd 31/03/2010 23:10 Page 1

Azg Ազգ

1 ԱՊՐԻԼ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 57 (4437)

ISSN: 1829-1651

Հայաստանն ու Թուրքիան ԱՄՆ նախագահի հրավերով կմասնակցեն Վաշինգտոնում կայանալիք միջուկային գագաթաժողովին

Ապրիլյան շաբաթ այլ հանդիպումների հիմնական թեման հայ-թուրքականն է ու դարաբաղյանը

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քաղաքականության մեջ, ինչպես եւ կյանքի շատ այլ ոլորտներում, ուժն է թելադրում իրավիճակը: Շաբաթը, որ առիթի դեմքում որեւէ կարծիք էին արտահայտում այն առնչությամբ, թե կընդունե՞ն արդյոք Հայաստանի եւ Թուրքիայի նախագահները ԱՄՆ նախագահի՝ Վաշինգտոն այցելելու հրավերը, հիմնականում արձագանքում էին. «Ինչպե՞ս կարող են չընդունել. կգնան, երկուսն էլ կգնան»:

Այս կարծիքը աղացույցներ չէր սանում մինչեւ երեկ, երբ հայտնի դարձավ երկու նախագահների արձագանքը ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրավերի կապակցությամբ: Կողմերից յուրաքանչյուրը թերեւս հնարավորինս ձգձգում էր Միացյալ Նահանգների նախագահի հրավերին իր պատասխանը բարձրաձայնելու պահը՝ սպասելով, թե երբ եւ ինչպես կարձագանքի հարեւան երկրի ներկայացուցիչը:

Նախագահ Սերժ Սարգսյանը ապրիլի 12-ին կմեկնի Միացյալ Նահանգներ՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրավերով մասնակցելու Վաշինգտոնում ապրիլի 12-13-ը կայանալիք Միջուկային անվտանգության գագաթաժողովին:

Բարաք Օբամայի Սերժ Սարգսյանին հղած հրավերում մասնավորապես ասված է. «Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ցուցաբերած նվիրվածությունը միջուկային անվտանգության եւ միջուկային ահաբեկչության դեմ պայքարի նպատակներին՝ ցանկանում եմ Ձեզ հրավիրել մասնակցելու Միջուկային անվտանգության գագաթաժողովին, որ տեղի է ունենալու 2010թ. ապրիլի 12-13-ը Վաշինգտոնի Համագումարների կենտրոնում»:

Հրավերում նշվում է նաեւ, որ գագաթաժողովի նպատակը միջուկային ահաբեկչության սպառնալիքի, նաեւ քաղաքացիական ու ռազմական նպատակով միջուկային նյութի տարածման վտանգի ընդհանուր ըմբռնումն ամրապնդելն է:

Տես էջ 3

Մեկնարկեց «Անմեղ նահատակի հիշատակին» շարժումը

Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը, մասնավորապես միության անդամ երիտասարդական ասոցիացիան նախաձեռնել են «Անմեղ նահատակի հիշատակին» շարժումը: Նախատեսվում է մինչեւ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը մայրաքաղաքում եւ Հայաստանի շրջաններում երիտասարդների ջանքերով տնկել 1,5 մլն ծառ:

Մարտի 31-ին տրվեց այս հասկանալի նախաձեռնության մեկնարկը: Ծառատունկ կատարեցին մայրաքաղաքի թիվ 13 երաժշտական հատուկ դպրոցը, Շիրազի անվան թիվ 169, Նոր Նորքի թիվ 163, Չարբախի թիվ 174 դպրոցները, ինչպես նաեւ Հայոց ազգային բանակի Նուբարաշենի մայրաքաղաքային գունդը: Բոլոր այս կրթօջախներն ու զորամասը մեծ խանդավառությամբ ընդունելով ծառատունկի կոչը, նաեւ պատրաստակամություն հայտնեցին՝ խնամելու բոլոր նորատունկ ծառերը:

Ծառատունկին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդ համարում:

Հ. Ա.

ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՀՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ-ոչ թերապիա թուրք հասարակության համար

ՀԱՄԼԵՏ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ոչ-ոչ», «զավեշտալի», «անհասկանալի», «հիմարություն», «մեծ կեղծիք» ու էլի նման կարճ մեկնաբանություններով թուրքական մի շարք պարբերականներ իրենց դիրքորոշումն արտահայտեցին թուրք փաստաբան **Բենդալ Զելիլ Էզմանի** գործողությունների կապակցությամբ: Նա դիմել է Անկարայի հաշտարար դատարան՝ պահանջելով, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: «Ճանաչեք հայերի ցեղասպանությունը: Մեղավոր ճանաչեք Թալեաթ փաշային եւ նրա համախոհներին: Թալեաթի անունը կրող փողոցներից ու պուրակներից հանեք այդ անունը»:

Այսպիսի ձեւակերպում է փաստաբանը ներկայացրել դատարան՝ պահանջելով, որ հետաքննություն սկսվի Թուրքիայի բրեական օրենսգրքի «Հանցանքը եւ հանցագործին գովերգելու եւ մարդկության դեմ ուղղված հանցագործություն կատարելու» հոդվածի հատկանիշներով: «Թուրքիայում առաջին անգամ է նման դատ բացվում: Թուրքիան պետք է հաշվի նստի իր անցյալի հետ», հայտարարել է նա Haberturk լրատվական կայքին: Լրագրողի հարցին՝ «Չե՞ք վախենում վտանգավոր հակազդեցությունից», թուրք փաստաբանը պատասխանել է. «Եթե ինձ հետ պետք է մի բան պատահի, ուրեմն դա աստծու կամքն է»: Սակայն սրանով Ոչ-ոչ թերապիան չի ավարտվել:

Թուրք պատմաբան **Սելիմ Դերինգիլը** անդրադարձել է 1890-ականների համիդյան կոտորածներին ու համարձակ արտահայտություններ արել Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Taraf թերթի լրագրողի «Անատոլիայում երիտթուրքերից առաջ հայերի կոտորածներ եղե՞լ են» հարցին թուրք պատմաբանը դրական պատասխան է տվել. «Այո՛, եղե՛լ է, սակայն սուլթան Աբդուլ Համիդի եւ երիտթուրքերի տարբերությունն այն է, որ վերջիններս նպատակ ունեին ամբողջությամբ վերացնել հայ բնակչությանը, իսկ Աբդուլ Համիդը նման նպատակ չուներ: Նա ցանկանում էր ազատվել որոշակի քանակությամբ հայերից, նվազեցնել նրանց դերը տնտեսության մեջ եւ հայերի փոխարեն ստեղծել մահմեդական բուրժուազիա»:

Դերինգիլը նշում է, որ Անատոլիայի քաղաքներում՝ Օրդու, Թոքաթ, Տրապիզոն, Ամասիա, Ուրֆա, Սիվաս եւ այլն, կոտորածներ են տեղի են ունեցել: Թուրք պատմաբանը փաստել է, որ Թուրքիայում հայերը ցեղասպանություն չեն իրագործել:

Տես էջ 2

Պայթյուններ Դաղստանում

Մոսկվայի մետրոպոլիտենի պայթյունից ընդամենն երկու օր հետո՝ երեկ նոր պայթյուններ են տեղի ունեցել Դաղստանի Ղզլար քաղաքում, որոնց զոհ են գնացել 12 մարդ, վիրավորների թիվը երկու տասնյակից ավելի է: Ղզլարում նախ պայթեցրել են պայթուցիկով լցված ավտոմեքենա, ընդ որում՝ պայթյունը տեղի է ունեցել հենց այն պահին, երբ ավտոմեքենայի մոտով անցնելիս է եղել ճանապարհային պարեկների խումբը: Երկրորդ պայթյունը տեղի է ունեցել 20 րոպե հետո նույն վայրում, որտեղ արդեն ժամանած իրավապահները սկսել էին աշխատել. ոստիկանական համազգեստով ահաբեկիչը պայթեցրել է ինքն իրեն: 12 զոհվածների թվում են նաեւ այս երկրորդ պայթյունին զոհ գնացած իրավապահներ, մասնավորապես՝ Ղզլարի ոստիկանապետն ու ՌԴ դատախազության քննչական մարմնի Դաղստանի վարչության ղեկավարը: Ռուսաստանի նախագահ **Դմիտրի Մեդվեդեւը երեկ հայտարարեց, որ Մոսկվայի եւ Ղզլարի ահաբեկությունները նույն շղթայի օղակներն են:**

Յուրացվել են Արցախի թեմի գումարները

Ըստ ԼՂՀ գլխավոր դատախազության կայքէջի՝ «ՀՀ հոգեւոր մշակութային վերածնունդ» հիմնադրամի գլխավոր տնօրեն Անդրանիկ Նիկողոսյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հատկանիշներով:

Համաձայն տեղեկատվության՝ Անդրանիկ Նիկողոսյանը եկեղեցիների շինության աշխատանքներում արագորեն շինանյութ հայթայթելու եւ ԼՂՀ տեղափոխելու համաձայնություն ձեռք բերելով Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հետ, թեմից ապառիկ ստացած 49.484.880 դրամի դիմաց 2007թ. սեպտեմբերից մինչեւ 2008թ. դեկտեմբեր մատակարարել է ընդամենը 41.898.760 դրամի շինանյութ՝ յուրացնելով մնացած 7.586.120 դրամը:

Փաստի առթիվ ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, կազմակերպված, սեփականության եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնում հարուցվել է քրեական գործ: Նախաքննություն իրականացնելու համար գործն ըստ ենթակայության ուղարկվել է ԼՂՀ ոստիկանական քննչական վարչություն:

Հ. Հ.

Ռուսաստանի դեսպանը «հանգստացնում» է կովկասցիներին

«Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ՝ Հայաստանում Ռուսաստանի դեսպան **Վյաչեսլավ Կովալենկոն Գյումրիում խոսել է Մոսկվայում օրերս կատարված ահաբեկչության եւ դրա հետեւանքով Մոսկվայից կովկասցիների հնարավոր արտաքսման մասին մամուլում տեղ գտած տեղեկությունների վերաբերյալ: Կովալենկոն խորհուրդ է տվել չհավատալ մամուլին. «Այն հրեշները, որոնք մեսրոյում իրականացրին այդ ահաբեկչությունը, եւ այն մարդիկ, որոնք կովկասցի են՝ հյուսիսային թե հարավային, ոչ մի կապ չունեն միմյանց հետ: Ամեն մի ընտանիք ունի իր այլանդակը, որոնք երկրի վրա չպետք է տեղ ունենան: Դրանք մարդ չեն», նշել է ՌԴ դեսպանը:**

Կովալենկոն բարեկեցություն է մաղթել Ռուսաստանում ապրող եւ աշխատող կովկասցի միգրանտներին. «Ասված տա, որ նրանք շարունակեն ապրել, աշխատել եւ բարգավաճել: Սա անխախտելի այն կապն է, որը միշտ եղել է ռուս եւ կովկասցի ժողովուրդների մեջ, եւ ոչ մի հրեշ կամ ահաբեկչի չի հաջողվի կտրել այդ կապը», եզրափակել է Ռուսաստանի դեսպանը:

Լոս Անջելեսում սպանվել է հայկական ընտանիքի արդեն երրորդ անդամը

Լոս Անջելեսում անցած շաբաթավերջին սպանվել է 38-ամյա Կարինե Հակոբյանը, ում ամուսինը՝ 43-ամյա Խաչիկ Սաֆարյանը, եւ դուստրը՝ 9-ամյա Լուսինեն սպանվել էին ավելի քան մեկ տարի առաջ: «Ազատություն» ռադիոկայանը հիմնվելով «Ասոշիեյթեդ պրես» լրատվական գործակալության տեղեկության վրա, նշում է, որ ուրբաթ օրը Կարինե Հակոբյանի 14-ամյա դուստրը մոր մարմինը՝ գլխի հետեւի մասում հրազենային վերքով, հայտնաբերել է նրա ավտոմեքենայի մոտ: Նույն դուստրը 2008 թվականի դեկտեմբերի 11-ին հայտնաբերել էր նաեւ սպանված հոր եւ քրոջ մարմինները: Ոստիկանությունը ընտանիքի երեք անդամների սպանությունների միջեւ կապ է տեսնում, թեեւ դա հաստատող ապացույցների դեռեւս չի տիրապետում: Ոստիկանության քննիչ **Դան Մայերսը ընդգծել է, որ ընտանիքի անդամներից ոչ մեկը քրեական աշխարհին առնչություն չի ունեցել: Խաչիկ եւ Լուսինե Սաֆարյանների սպանությունից հետո ոստիկանությունը 75 հազար դոլար էր խոստացել հանցագործության բացահայտմանը նպաստող տեղեկության համար, սակայն դեռեւս մեծ առաջընթաց այդ գործում չի արձանագրվել: Հակոբյանը եւ Սաֆարյանը ամուսնացել էին Երեւանում եւ Միացյալ Նահանգներ տեղափոխվել 2003 թվականին:**

Հ. Ա.

«Ամերիաբանկը» եւ «Կասկադ բանկը» միաձուլվում են

Միաշուկված բանկը կկոչվի «Ամերիաբանկ»

«Ամերիաբանկի» տնօրենության նախագահ-գլխավոր տնօրեն **Արսակ Հանեսյանն** ու «Կասկադ բանկի» գործադիր տնօրեն **Ահարոն Լեւոնյանը** երեկ հայտարարեցին երկու բանկերի բաժնետերերի՝ Ռուբեն Վարդանյանի եւ Զերալդ Գաֆեսճյանի միջեւ կնքված միաձուլման պայմանագրի մասին:

Մասնավորապես, Արսակ Հանեսյանն ընդգծեց, որ երկու բանկերի այս միաձուլումը նախադեպ չունի Հայաստանի բանկային համակարգում: Նոր միաձուլված բանկը կդառնա Հայաստանի խոշորագույն բանկերից մեկը՝ 75 մլն դոլար կապիտալով, 397 մլն դոլար ակտիվներով, 262 մլն դոլար պարտավորություններով, 179 մլն դոլար վարկային պորտֆելով՝ այս ցուցանիշներով հայտնվելով Հայաստանի բանկերի առաջին եռյակում:

Արսակ Հանեսյանը տեղեկացրեց, որ միաձուլման գործընթացը դեռ շարունակվում է եւ կունենա երկու փուլ՝ նախապատրաստական եւ բուն միաձուլման: Նրա կարծիքով, միաձուլումը կավարտվի այս տարի: Թե որքա՞ն կկազմեն այս բանկերի հիմնադիրների բաժնեմասերը նոր բանկում, «Ամերիաբանկի» գլխավոր տնօրենը պատասխանեց, որ դա կպարզվի առաջիկայում:

Ահարոն Լեւոնյանն իր հերթին նշեց, որ միաձուլման նպատակն ավելի ուժեղ եւ ավելի խոշոր բանկ ստեղծելն ու ավելի մրցակցային դառնալն է:

Իսկ Արսակ Հանեսյանը տեղեկացրեց, որ նոր բանկը կկոչվի «Ամերիաբանկ», ի պատասխան տրված հարցի նշեց, որ ինքը չի սիրում կլանում բառը, եւ սա միաձուլում է:

Ա. Մ.

AZG NEW PDF.qxd 31/03/2010 23:35 Page 1

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ճահճուտային խաղաղություն

Մենք տարբեր առիթներով գրել ենք, որ Հայաստանի խաղաղական դաշտի եւ ընդդիմադիր, եւ իշխանական հասվածները ոչ թե գլոբալ եւ հեռանկարային նախագծեր են կազմում մեծ մասամբ, որոնցում դրված է պետության եւ հասարակության գեներասորներն ու աղագայի ճարտարապետները լինելու կանխավարկածը, այլ հանգրվանային խնդիր լուծողներ են, որոնցից, եթե ազգի սուրսն ավարտին չմոտենար. իսկ հիմա խոսեմ, որքան կարող եմ, ազգի փրկչի լուսապսակը մինիմում բոլորն են քաշում վրաները, իշխանության գալուց հետո երկիրը կոռուպցիայից ազատելը, Ղարաբաղի հարցը հայանպաստ լուծելը, թուրքերի հերն անիծելն էլ՝ մախիմում ծրագիր է տորֆային ճահիճների մեր բնակիչների համար: Այսպես էլ ապրում ենք:

Իսկ այն թեթեւությունը, որով մեր կուսլիդերները խոսում են հնարավոր պատերազմի մասին, կարծես արեւածաղկի սերմ են չրթում ընդամենը, առանց նկատելու, որ բնակչությունն, այնուամենայնիվ, իրենց ասուխոսից եզրահանգումներ է անում, վախենում պատերազմի առումով՝ պարզապես սարսափեցնող է: Կամ էլ թե՝ «կլոր սեղան», պատերազմի ու այլ թեմաներով, սրա նման էլ եսիմ ինչ՝ փրկության կոմիտե. անհամ գաղափարներ, որ ոչ էլ գաղափար են, այլ լավ մոռացված հնից «պլագիաս», որ ցույց են տալիս, թե բոլոր վիճակներում մերոնք ոչ թե կուզեին ազգին օգտակար մի գործ անել- խնդիր թեթեւացնել, այլ անվերջ-անդադար, փրփուրը բերանին խոսելու տեղ ունենալ: Խորհրդարանը, զանազան մամուլի ակումբները, մեկին-մեկ կրկնող լրատվական կայքերը, որոնք ըստ ճաշակի ու նախասիրությունների ամեն օր լցված են մեր քաղաքականների մտածող գլուխներով, նրանց համար քիչ են, նրանց համար քիչ է թերթերի առաջին-երկրորդ-երրորդ էջերում ամեն օր իրենց սփաթները տեսնելը, դեռ պետք է մի ձեւաչափ էլ, որտեղ ամեն օր կիավավե՛ն-կխոսե՛ն, կերկարաձգե՛ն, լրագրողներն էլ գումարած, մի քանի ժամ կխոսեն-կխոսեն-կխոսեն... Ի սեր աստծո:

Բայց մի բանում համաձայն ենք այս գաղափարն առաջարկող Սյոմպա Սաֆարյանի հետ՝ անգամ միասին խոսելիս մերոնցից ամեն մեկը մենախոսելու է, մենախոսության ժանրը մեզ մոտ կատարելության է հասցված: Բայց ի՞նչ պիտի անեին մեր քաղաքականները նախագահական ընտրություններից մեկ տարի հետո առաջացած բացարձակ քաղաքական տարտամության մեջ, եթե հայ-թուրքական թեման չլիներ կամ ԼՂՀ խնդրում ստատուս քվոյի ժամանակային ռեսուրսն ավարտին չմոտենար՝ այս երկու թեմաները փրկեցին մեր քաղաքական դաշտի՝ ասիճանաբար լողզվող դեմքը, եւ նրանք երկու նոր առիթ ունեցան մնալու ապագան ուրվագծելու խնդիր առաջանա, մեծ հաշվով օգուտ չկա: Իսկ ի՞նչ բան է հանգրվանային խնդիրը ձեր կարծիքով. ճիշտ եք, ոչ թե հասարակության եւ ժողովրդի մեծամասնություն կազմող հասվածների կյանքի բարելավման, ոչ թե աշխատող իդեաների ներմուծման, կամ տնտեսական առաջադիմություն ապահովող այնպիսի առաջարկներ, որոնք կօգնեն պետությանը ոտքի տակ չգնալ, այլ միայն ու միայն մրցավազք՝ սեւացնելու մեր առօրյան, պետությանը եւ նրա առաջին դեմքերին, կառուցողական ամեն միավորի այնքանով ու այն աստիճան, որքին եթե մարդիկ հավատան՝ մի ելք կմնա որպես լուծում՝ իշխանափոխություն: Գրելը՝ գրել ենք, բայց մեր քաղաքական դաշտը բարեփոխելու գործնական ուղի ոչ ոք դեռ չի կարողանում գտնել, եւ դա՝ ինքնամբրում, առաջին հերթին քաղաքական դաշտն ինքը պետք է իրականացնի: Այնպես որ դատապարտված ենք լողալու մեր քաղաքական ճահճուտում, լսելու ճահճուտի տարբեր անկյուններից լսվող տարբեր բարձրության ու տոնայնության կոկռոցներ, որոնք մենք, այնուամենայնիվ, անվանում ենք քաղաքականություն:

Հիմա այս մեր ճահճուտային քաղաքականներին նախագահական ընտրություններից մեկ տարի անց կատարյալ տարտամությունն էր կուլ տալու, եթե ու հանկարծ հայ-թուրքական նախաձեռնությունը չլիներ, եւ կամ քաղաքական դաշտից անկախ պատճառներով՝ ԼՂՀ ստատուս քվոյի պահպանման ժամանակային ռեսուրսն ավարտին չմոտենար. իսկ հիմա խոսեմ, որքան կարող եմ, ազգի փրկչի լուսապսակը մինիմում բոլորն են քաշում վրաները, իշխանության գալուց հետո երկիրը կոռուպցիայից ազատելը, Ղարաբաղի հարցը հայանպաստ լուծելը, թուրքերի հերն անիծելն էլ՝ մախիմում ծրագիր է տորֆային ճահիճների մեր բնակիչների համար: Այսպես էլ ապրում ենք:

Դե իսկ հիմա՝ լավ է, Էրդողանը կայցելի Վաշինգտոն-չի այցելի՝ կոնֆերանսի, նախագահ Սարգսյանը նույնպես կգնա, թե՞ չի գնա, այնտեղ Բարաքի հետ կհանդիպեն-չեն հանդիպի՝ Օբաման, ախր, Սարգսյանին ուղղված հրավերում ասել է, թե շարունակելու է նրա ու Էրդողանի հետ տարածաշրջանային խնդիրների քննարկումը: Հայաստանի ներքին եւ արտաքին մարտահրավերներին էս մեր շատախոս քաղաքականները պե՞տք է դիմակայեն: «Կլոր սեղանը» երկխոսելու առաջարկ է, բայց ո՞ւմ, եւ ինչո՞ւ. նախ երկխոսության հեղինակն ինքն անվերջ մենախոսում է խորհրդարանում, հետո արդեն իսկ այդ առաջարկի հակադարձումները պարզում են մեր քաղաքական դաշտի՝ բազմիցս ֆողարկումների ենթարկված հերթական դիմակները. մեկն ասում է՝ միացեք մեզ ու խորհրդարանը գրելու պահանջ դրեք (սա էլ՝ իրենց մեկընդմիշտ «կլոր սեղանն է»). մյուսը հույսը կապել է առաջիկա մեկ երկու ամսի բուռն զարգացումների հետ՝ ղարաբաղյան կարգավորման գործընթացում, սպասում են տապալումների՝ Ղարաբաղի հերն էլ անիծած, սպասում են՝ սխալվեն-եզին շուռ տան, ուրիշի դիմակը պատռելու մասին են խոսում մեր այս դիմակավորները:

Էհ, այսպիսի քաղաքական դաշտով մարտահրավերներին դիմագրավելու ու երկխոսելու մասին մտածելն իսկ մեղք է:

ԱՐՏԱԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տոկային թերապիա թուրք հասարակության համար

1-ին էջից

«Պաշտոնական պատմագրության հաղորդած ապստամբություններն այնքան էլ ճիշտ չեն: Հիմնականում ապստամբություն որպես այդպիսին չի եղել: Ուրֆայում տեղի են ունեցել լուրջ կոտորածներ: Առաջին ամենաընդգրկուն կոտորածը տեղի է ունեցել Դիարբեքիրում 1895թ.: Այնտեղ ահավոր սպանդ տեղի ունեցավ: Այդ ամենն արել են համիդյան ջոկատները եւ բնակչությունը: Սպանդի ընթացքում տեղի են ունեցել թալան եւ բռնաբարություն»:

Թե որքան զոհ է եղել այդ տարիներին՝ պատմաբանը ստույգ թիվ չի նշել: Նա մեջբերել է հայոց պատրիարքարանի տվյալները, որ 1894-1897թթ կոտորվել է 300.000 հայ: «Գուցե թիվը խեղաթյուրված է, սակայն իրականություն է, որ Աբդուլ Համիդի ժամանակաշրջանում զգալի քանակությամբ հայ է կոտորվել: Սակայն ես չեմ կարծում, որ 1895թ. կոտորածը 1915թ. իրադարձությունների փորձարկումն էր: Աբդուլ Համիդի օրոք կոտորած է տեղի ունեցել, սակայն, ի տարբերություն երիտթուրքերի, նախօրոք ոչնանավորված ծրագիր չի եղել: Երիտթուրքերը ջանքեր են գործադրել 1915-ին ամբողջությամբ վերացնելու հայերին: Համիդի օրոք տարբեր շրջաններ էին ուղարկվում սադրիչներ՝ մոլլայի հագուստներով, ովքեր ուրբաթօրյա նամազի ընթացքում սադրանքներ էին կազմակերպում եւ հայտարարում, որ հայերը հարձակվել են մահմեդականների վրա: Շատ վայրերում հայերը փորձասանություն էին կազմել, հետեւաբար հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող էին ուրբաթօրյա նամազի ընթացքում հայերը հարձակվել մահմեդականների վրա», եզրափակել է թուրք պատմաբանը:

«Մենք ապրում ենք բոլորովին այլ Թուրքիայում»

Ստորագրահավաքին միացել են Հրանտ Դինքի ընտանիքի անդամները

Թուրքիայում բնակվող հայ ներգաղթյալներին իրենց աջակցությունն են արտահայտել պոլսահայ համայնքի մի խումբ ներկայացուցիչներ, որոնք ստորագրահավաք են սկսել եւ հայտարարություն տարածել՝ «Մենք ապրում ենք բոլորովին այլ Թուրքիայում» վերտառությամբ: Հայտարարության մեջ համայնքի ներկայացուցիչներն իրենց վրդովմունքն են արտահայտել Սամբուլի Սուրբ Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Պետրոս Շիրինօղլուի հայտարարությունների վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Շիրինօղլուն Թուրքիայի վարչապետի հետ հանդիպումից հետո հայտարարել էր, որ Օսմանյան Թուրքիայում 1915 թ. տեղի ունեցած հայկական կոտորածները պետք է որակել ոչ թե ցեղասպանություն, այլ՝ «վեճ երկու անկեղծ ընկերների միջեւ»: «Շիրինօղլուն հայ համայնքի առաջնորդը չէ: Նրա լիազորությունների մեջ չի մտնում ներկայացնել հանրությանը եւ քաղաքական թեմաներով մեր անունից հայտարարություններ անել: Շիրինօղլուի հայտարարությունները ոչ թե հայ հանրության, այլ նրա սեփական տեսակետներն են: Իրականությանը չի համապատասխանում նրա հայտարարությունը, թե Թուրքիայում հայերը ոչ մի բողոք չունեն: Սակայն մենք ապրում ենք բոլորովին այլ երկրում: Գուցե նա իրեն անվտանգ է զգում, սակայն ասել, թե Թուրքիայում հայերն իրենց անվտանգ են զգում, սուտ է: Հայերն այս երկրում ենթարկվում են ցեղասպանական հարձակումների եւ ազգային խտրականության, եւ թուրք հանրության գերակշռող հատվածում առկա են հակահայկական տրամադրություններ: Մենք սպասում էինք, որ Շիրինօղլուն վարչապետին կհիշեցնի 3 տարի առաջ տեղի ունեցած Հրանտ Դինքի սպանության եւ այն մասին, որ այդ զգալի հանցագործության հետեւում կանգնած ուժերին բացահայտելու համար իրական քայլեր չեն իրականացվել», ասված է հայտարարությունում:

Նրանք Էրդողանի՝ 100.000 հայերին երկրից արտաքսելու մասին հայտարարությունից հետո, Շիրինօղլուի «վարչապետին աղաչեղեկացնելու համար ներողություն ենք խնդրում» խոսքերն առաջարկում են համարել միջազգային հանրության վրա ազդելու փորձեր: «Անկախ ազգությունից՝ այս երկրում գոյատեւող մղող ներգաղթյալներին երկրից վտարելու սպառնալիքները բարոյականության շրջանակում չեն տեղավորվում: Այս երկրում պատանդ չենք, եւ որպես քաղաքացու հավասար իրավունքներով ապրել ցանկացող հայեր՝ ընդառաջում ենք վարչապետին իր խոսքերի համար եւ չենք միանում Շիրինօղլուի հայտարարություններին», ասել են նրանք: Ստորագրահավաքը կազմակերպվել է www.bizbaskabirturkiyedeyasiyoruz.blogspot.com կայքէջում: Ստորագրահավաքին իրենց զորակցություն են հայտնել պոլսահայ համայքի 286 ներկայացուցիչներ, այդ թվում՝ «Ակօս» շաբաթաթերթի սպանված խմբագրապետ Հրանտ Դինքի ընտանիքի բոլոր անդամները, որոնք համարվում են պոլսահայ պահպանողական շրջանակների մոլի հակառակորդներ:

Հ. Հ.

ՈՐՈՒ Է ԻՍԿԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

«Ռոբերտ Քոչարյանի իշխանության գալու գինը ԼՂՀ-ին բանակցային գործընթացից հանելն էր»

Կարծիքներ ՀՀՇ-ական թեւից

ՀՀ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը մադրիդյան հրապարակված 6 սկզբունքները չի ընդունում, մեկնաբանելով, որ դրանք չեն բխում ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղի հանրապետության շահերից:

«Նման սկզբունքների վրա խարսխված որեւէ լուծում անընդունելի է մեզ համար: Կողմնակից ենք խաղաղ կարգավորման, մեզ համար ընդունելի է այն, ինչ ընդունելի է Ղարաբաղի ժողովրդին: Ինչ վերաբերում է փոխզիջումներին, ապա դրանց սահմանն էլ պետք է խելամիտ լինի», ասում է Արզումանյանը: Միայն ԼՂՀ միջազգային ճանաչման դեպքում Արզումանյանը կմտածի տարածքների զիջման մասին, որովհետեւ դա ամենամաստչելի տարբերակն է: Նրա բնորոշմամբ՝ իշխանություններն իրենց ռեսիսնե խոցվակի տեղ դրած ապրում են ու սպասում՝ «յա էշը կսատկի, յա՝ իշտարը»: Բայց դա, ըստ նախկին արտգործնախարարի, երկար չի տեւի: Ժամկետը՝ 2 ամիս: «Այդ ընթացքում զարգացում կլինի: Կա՛մ դիմակը կպատռվի, կա՛մ էլ հասարակությունը կգիտակցի, թե ովքեր են այս իշխանությունները: Կլինեն լուրջ զարգացումներ, սպասե՛ք», առաջարկեց Արզումանյանը:

ՀՀՇ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանը նշում է, որ իրենք այնման են կարեւորում ԼՂՀ դիրքորոշման արտահայտման հնարավորությունները, որ «մինչեւ անգամ ԼՂՀ ճանաչումը պետք է դառնա լուրջ քննարկման առարկա»: Նա որեւէ նմանություն չի տեսնում 1998-ի եւ 2010-ի միջեւ ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում:

«ՀՀ իշխանությունները, օգտվելով առիթից, որ ներկայացնում են ՀՀ եւ ԼՂՀ շահերը, ոչ չարամտորեն, բայց լուրջ գործընթաց ծավալեցին, տապալեցին եւ թուլացրին հայկական կողմի դիրքերը», նկատում է նա:

Անդրադառնալով ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի հայտարարությանը, որ նա Ստեփանակերտին դուրս չի մղել բանակցություններից, Զուրաբյանն ասաց. «Քոչարյանի իշխանության գալու գինը եղել է ԼՂՀ-ին բանակցային գործընթացից հանելը: Նա մեկնեց Ֆրանսիա, հետո, երբ վերադարձավ Հայաստան, Ղարաբաղը դուրս մնաց բանակցություններից: Իր անձնագրի բացակայությունը, առաջադրման իրավունքի բացակայությունն ու միջազգային հանրության հանդուրժող վերաբերմունքն այս ամենի շուրջը բացահայտ էր. Քոչարյանը նրանց ծառայելու էր, իսկ գինը Ղարաբաղն էր»:

Երբեմնի իշխանության ներկայացուցիչները չզլացան մեկնաբանություններ անել նախորեին հնչած արտահայտությունների ու առաջարկությունների վերաբերյալ:

«Սամվել Բաբայանը թո՛ղ գնա մսխողներին հարցնի, թե ովքեր են 16 տարի մսխել փայլուն հաղթանակը: Էդ մսխողներից մեկն էլ ինքն էր», նկատեց Արզումանյանը: ՀՀՇ վարչության փոխնախագահ Խաչիկ Քոչոբելյանն էլ խորհուրդ տվեց «Ժառանգություն» կուսակցությանը վիրտուալ առաջարկներ չանել:

«Դժվար է հասկանալ նրանց մոտեցումները: Կուսակցությունները տարբեր մոտեցումներ ունեն: Դա ընդամենը PR-ի մի ձեւ է: Գուցե ապագայում նման ձեւաչափով խումբ ստեղծելը հնարավոր լինի, բայց այսօր անհնար է: Երբ խնձոր հնարավոր չէ տեղավորել երկու արկղում», նկատեց նա:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 31/03/2010 22:21 Page 1

Երեւանում բացվեց ճառագայթային ախտորոշման եւ բուժման կենտրոն

Երեկ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ներկայությամբ տեղի ունեցավ Երեւանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) ճառագայթային ախտորոշման եւ բուժման (ռադիոլոգիայի) կենտրոնի հանդիսավոր բացումը: Կենտրոնը ստեղծվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Նազար եւ Արտեմիս Նազարյան հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ՀԲԸՄ նախագահ **Պերճ Սեդրակյանը**, որ ներկա էր կենտրոնի բացմանը, նշեց. «Մեր առաքելության կարեւոր մասն է հայրենիքին թիկունք կանգնելը: Հայկական բարեգործական ընդհանուր միությունը պատմականորեն միշտ էլ օժանդակել է մեր ազգային հաստատություններին»:

Բժշկական համալսարանի եւ ՀԲԸՄ-ի համագործակցությունը սկսվել է դեռ 1929 թվականից, երբ միության հիմնադիր նախագահ Պողոս Նուբար Փաշայի նվիրատվությամբ Հայաստանում առաջին անգամ հիմնվեց ակնաբուժական կլինիկա, որը 2009-ին վերակառուցվեց եւ վերազինվեց բժշկական համալսարանի միջոցներով: 2000 թվականին ՀԲԸՄ-ի Նազարյանների հիմնադրամի աջակցությամբ բժշկական համալսարանում նաեւ բացվել է Ջեֆերսոնի ուսումնական կենտրոնը:

Ճառագայթային ախտորոշման եւ բուժման կենտրոնի կառուցման ծախսերը կազմել են 4,5 միլիոն դոլար, որի շուրջ 2,8 միլիոնը վարկային միջոցներ են, որոնք տրամադրվել են սարքավորումներ ձեռք բերելու համար, մնացած 1,7 միլիոն դոլարը նվիրաբերել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, ավելի կոնկրետ՝ միության հոգաբարձուների խորհրդի անդամ, ազգային բարերար **Նազար Նազարյանը**: Վերջինիս խնդրանքով եւ համալսարանի գիխտորհրդի որոշմամբ կենտրոնն անվանվել է բարերարի որդու՝ ամերիկահայ բժիշկ-ռադիոլոգ Լեւոն Նազարյանի անունով:

«Ուրախ եմ, որ մեր նոր սերունդը՝ թե՛ Ամերիկայում, թե՛ այլ երկրներում աշխատող, կաղված է Հայաստանի հետ: Մեր բժիշկները, ընկերները պետք է գան Հայաստան եւ օգնեն այս երկրին, մենք ուզում ենք ամեն կերպ օգնել հայկական պետությանը», ասաց Նազար Նազարյանը:

Նորաստեղծ կենտրոնն ունի տարածաշրջանային նշանակություն, այստեղ սպասվում է հիվանդների հոսք հարեւան երկրներից: Փաստորեն, իրականություն է դառնում նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկած տարածաշրջանային բուժկենտրոնների ստեղծման գաղափարը:

Եռահարկ շինության մակերեսը կազմում է 1700 քմ: Բժշկական համալիրն աղահովված է ջեռուցման, հովացման, տաք եւ սառը ջրամատակարարման, օդափոխության կենտրոնացված համակարգերով:

Կենտրոնի բուժանձնակազմը երեք տարի մասնագիտական վերապատրաստում է անցել ԱՄՆ-ի Ջորջիա նահանգի Մերսեր բժշկական համալսարանում եւ Ջորջիայի նյարդավիրաբուժական ինստիտուտում:

«Կենտրոնը կառուցելուց հետո շատ կարեւոր խնդիր է բանիմաց կադրեր ունենալը: Այս հարցում մեզ օգնել է բժշկական համալսարանի շրջանավարս, ամերիկահայ նյարդավիրաբույժ Արթուր Գրիգորյանը: Նրա աջակցությամբ կենտրոնի համար 3 տարի շարունակ 14 երիտասարդ մասնագետներ են պատրաստվել արտասահմանում», իր ելույթի ժամանակ նշեց ԵՊԲՀ-ի ռեկտոր **Գոհար Քյալյանը**:

Ռեկտորն ասում է, որ Արթուր Գրիգորյանը Ջորջիայի նյարդավիրաբուժական կլինիկայի առաջատար մասնագետներից է: Վերջինիս անմիջական ֆինանսավորմամբ եւ հսկողությամբ են վերապատրաստվել կենտրոնի երիտասարդ բժիշկները:

ՖՈՏՈ ՈՒԻԸ

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նոպաստները կբարձրանան 3500 դրամով, թոշակները՝ 2650 դրամով

Կառավարության այս որոշման մանրամասներին անդրադարձան ֆինանսների ու աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարները:

Գազի գնի բարձրացման եւ գնաճային այլ ճնշումներով պայմանավորված, կառավարության կողմից կենսաթոշակների եւ սոցիալական նոպաստների բարձրացման որոշման մանրամասները ներկայացնելու նպատակով երեկ մամուլի ասուլիս էին հրավիրել ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանն ու աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Մխիթար Մնացականյանը:

Ֆինանսների նախարարը հայտնեց, որ կառավարության մարտի 25-ի նիստում ընդունված վերոնշյալ որոշումները նպատակ ունեն սոցիալական առավել խոցելի խավերի համար գազի գնի բարձրացմամբ եւ գնաճով պայմանավորված հետեւանքները մեղմելու: Այդ նպատակով ստեղծված աշխատանքային խումբն իր առաջարկներն էր ներկայացրել կառավարությանը, որոնք էլ դարձան կառավարության որոշման հիմք: Մասնավորապես, այս տարվա մայիսի 1-ից նախատեսվում է միջինը 3500 դրամով կամ 15 տոկոսով բարձրացնել սոցիալական նոպաստները: Ըստ Տիգրան Դավթյանի, դա առնչվելու է սոցիալական նոպաստ ստացող 110 հազար ընտանիքների, այսինքն՝ մի քանի հարյուր հազար մարդու:

Ըստ ֆինանսների նախարարի, աշխատանքային խմբի հաշվարկներով, ամսական գազի գնի միջին ծախսն ավելանում է 2500 դրամով, բայց նոպաստները 3500 դրամով բարձրացնելով կառավարությունը նաեւ գնաճի այլ հետեւանքները որոշակիորեն մեղմացնելու նպատակ է հետապնդում:

Նոյեմբերի 1-ից թոշակները մոտ 11 տոկոսով կամ 2650 դրամով բարձրացնելու որոշումը վերաբերում է մոտ 530 հազար կենսաթոշակառուներին: Հետեւաբար, գնաճի հետեւանքները մեղմելուն կոչված այս միջոցառումները կընդգրկեն շուրջ 1 մլն մարդկանց: Դա բյուջեի համար կարժենա լրացուցիչ 6-6,5 մլրդ դրամի ծախս: Այդ գումարները կառավարությունն ակնկալում է ստանալ հարկային եկամուտների հավաքման ցուցանիշների բարձրացման եւ վարչարարության խստացման միջոցով; Ֆինանսների նախարարը տեղեկացրեց, որ այս տարվա առաջին երկու ամիսներին ծրագրվածից ավելի հարկեր են հավաքվել, եւ եռամսյակային արդյունքներով նույնպես սպասվում է, որ մուտքերն ավելի բարձր կլինեն նախատեսվածից:

Ինչո՞ւ են նոպաստները բարձրանալու մայիսի 1-ից, իսկ թոշակները՝ նոյեմբերի 1-ից: Տիգրան Դավթյանը պատասխանեց, որ մայիսին նոպաստների բարձրացումը պայմանավորված է նրանով, որ այդ ամսին են կատարվելու ապրիլին բարձրացած գազի գնի դիմաց վճարումները, իսկ թոշակների նոյեմբերի 1-ից բարձրացումը՝ որ այդ ամսից ավելանում են գազի սպառման ծավալները, եւ բացի այդ, պետության ռեսուրսներն այդ հնարավորությունն ունեն:

Խոսելով գնաճի զսպման միջոցառումների մասին, ֆինանսների նախարարը նշեց, որ կառավարությունն ու Կենտրոնական բանկը փորձելու են զսպել գնաճը իրենց գործիքակազմով՝ պետբյուջեի դեֆիցիտը նվազեցնելով, մրցակցային դաշտը բարելավելով, ԿԲ-ն՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնելով:

Հայրենական մեծ պատերազմի վետերաններին ավանդների արտահերթ փոխհատուցման մասին խոսեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Մխիթար Մնացականյանը, ավելացնելով նաեւ, որ պետությունը մոտ 3700 վետերանների համար նաեւ 120-հազարանոց դրամ է հատկացրել առողջականուրորտային կարիքները հոգալու համար:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նախաճգնաժամային վիճակին կվերադառնանք 2011-ի վերջին

Խոսելով Հայաստանի տնտեսության հետճգնաժամային վիճակի մասին, երեկ նման կանխատեսմամբ հանդես եկավ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը: Նա այն կարծիքը հայտնեց նաեւ, որ Հայաստանի տնտեսությունն այժմ մտել է կայունացման եւ վերականգնման փուլ:

Ա. Մ.

ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐ

Հասարակական կազմակերպությունները մասնակցելու են Արեւելյան գործընկերության ազգային օրակարգի ձեւավորմանը

Արեւելյան գործընկերության 6 երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Բելառուսի, Մոլդովայի եւ Ուկրաինայի հետ համագործակցությունը նույն գործընկերության շրջանակում խորացնելու համար Եվրոպական հանձնաժողովն ակտիվացնելու է քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնությանն արդեն արձագանքել են:

2009 թվականի նոյեմբերին Բրյուսելում կայացավ Քաղաքացիական հասարակության առաջին համաժողովը, որին մասնակցեցին 21 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: «Որպեսզի աշխատանքները տեղում առավել արդյունավետ լինեն, որոշվեց, որ Արեւելյան գործընկերության «թիրախ» 6 երկրներում կստեղծվեն ազգային պլատֆորմներ: Այս պլատֆորմների նպատակն է լինելու Արեւելյան գործընկերության սկզբունքներն իրենց երկրում բարձրացնելու եւ կյանքի կոչելու ուղղությամբ», «Ուրբաթ» ակումբում նշեց Երեւանի Մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նավասարդյանը: Նա մասնակցել էր ֆորումին եւ ընտրվել հայաստանյան համակարգող:

Ազգային պլատֆորմներում ընդգրկվելու են հասարակական կազմակերպությունները, որոնք մասնակցելու են նաեւ Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում Հայաստանի ազգային օրակարգի ձեւավորմանը: «Մենք ներկայացնելու ենք մեր առաջարկները», ասաց Բորիս Նավասարդյանը: Նա նկատում է, որ ի տարբերություն Նոր հարեւանության ծրագրի, Արեւելյան գործընկերությունը իսկապես լուրջ ուշադրության է դարձնում քաղաքացիական հասարակության ներգրավմանը: «Հույս ունենք, որ մինչեւ մայիսի վերջ, հունիսի սկիզբ ազգային պլատֆորմն արդեն ձեւավորված կլինի», ասաց Բորիս Նավասարդյանը: Ծրագրի ֆինանսավորումն իրականացնելու է Եվրոմիությունը: Բորիս Նավասարդյանը ենթադրում է, որ Արեւելյան գործընկերության ֆինանսավորման ծավալները չեն լինի ավելի փոքր, քան նոր հարեւանությանը, որը կազմում էր մոտ 100 մլն եվրո:

Արեւելյան գործընկերության շրջանակներում նախատեսվում է նաեւ ազատականացնել վիզային ռեժիմը: «Գործընթացը շատ ավելի արագ է ընթանում, քան մենք սպասում էինք: Սկզբից վիզայի տրամադրման կարգն ազատականացվելու է ուսանողների, գիտնականների, լրագրողների համար: Եվրոմիությունում կան երկրներ, որոնք շահագրգռված են անգամ վիզային ռեժիմի վերացմամբ», ասաց Բորիս Նավասարդյանը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայաստանն ու Թուրքիան ԱՄՆ նախագահի հրավերով կմասնակցեն ...

1-ին էջից

Օբամայի խոսքով, որպես միջուկային նյութի համար պատասխանատվություն կրողներ՝ գագաթաժողովի մասնակիցները պետք է պարտավորվեն հնարավորինս նվազեցնել դրա հասանելիությունը, ինչպես նաեւ աղահովել այդ նյութի մնացորդների պահպանության բարձրագույն չափանիշներ:

Չնայած ԱՄՆ նախագահի հրավեր-նամակում ոչինչ չի նշվում հայ-թուրքական արձանագրությունների ու հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման, սահմանի բացման գործընթացների մասին, սակայն ակնհայտ է, որ ԱՄՆ նախագահի հետ Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների հանդիպմանը քննարկվելու են հենց այս հարցերը, իսկ գագաթաժողովը առիթ է, ինչպես եւ պատահում է նման իրավիճակներում, համատեղություն աղահովելու երկու երկրների պարագայում:

Այս հանդիպումն առավել մեծ կարեւորություն է ձեռք բերում ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացի համատեքստում, այլեւ Հայոց ցեղասպանության բանաձեւի՝ ԱՄՆ Կոնգրեսում ընդունման, նաեւ ապրիլի 24-ի ամենամյա ուղերձում Բարաք Օբամայի կողմից «ցեղասպանություն» եզրի օգտագործման առումով:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, թուրքական աղբյուրների համաձայն, կմեկնի ԱՄՆ գագաթաժողովից մեկ օր առաջ՝ Էրդողանի հետ Միացյալ Նահանգներ կմեկնի նաեւ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանը, որ հետ էր կանչվել խորհրդակցությունների ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության ճանաչման թիվ 252 բանաձեւի ընդունումից հետո:

Հետաքրքրական է, որ եթե հայկական կողմը որեւէ կերպ չէր արտահայտում Վաշինգտոն մեկնելու մոտեցումները, չէր նշվում, թե Հայաստանի նախագահը կամ մեկ այլ պաշտոնյա ներկա կլինեն գագաթաժողովին, ապա թուրքական կողմը նախապես տարածել էր լուրեր, թե ԱՄՆ կմեկնի ոչ թե Թուրքիայի առաջին դեմքերից որեւէ մեկը, այլ մեկ ուրիշ պաշտոնյա: Հատկանշական է, որ հենց թուրքական մի շարք քաղաքական ուժերի ներկայացուցիչներ վստահություն էին հայտնել, թե Էրդողանն, անկախ բոլոր տեսակի հայտարարություններից, կմեկնի ԱՄՆ՝ դրական պատասխան տալով Բարաք Օբամայի հրավերին:

Հայ-թուրքական, թուրք-ամերիկյան, նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի թեմաների կողքին եւս երկուսը կարող է ավելանալ, երբ քննարկման սեղանի շուրջը նստեն Թուրքիայի վարչապետ Էրդողանն ու Ֆրանսիայի նախագահ Սարկոզին: Թերեւս պատահական չէ, որ Թուրքիայի վարչապետը Միացյալ Նահանգներ մեկնելուց առաջ պաշտոնական այցելությամբ կլինի Ֆրանսիայում՝ ապրիլի 6-7-ը այցելելու նախագահ Նիկոլա Սարկոզիի հրավերով:

Պաշտոնապես նշվում է, թե Ֆրանսիայի նախագահի եւ Թուրքիայի վարչապետի հանդիպմանը քննարկվելու են Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության, իրանյան միջուկային խնդրի, հայ-թուրքական հարաբերությունների եւ այլ խնդիրներ: Նախատեսվում է նաեւ Էրդողանի ելույթը Ֆրանսիայի թուրքական համայնքի ներկայացուցիչների համար:

Վերջերս Թուրքիան հաճախ խոսում, իսկ ավելի հաճախ քննադատում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական առաքելության իրականացումը ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում: Քանի որ Ֆրանսիան Մինսկի խմբի համանախագահող երկրներից մեկն է, ապա ամենայն հավանականությամբ Թուրքիայի վարչապետը Ֆրանսիայի նախագահի հետ կանդրադառնա նաեւ ղարաբաղյան խնդրին, գուցե նաեւ ներկայացնի սեփական նկրտումները ղարաբաղյան գործընթացում միջնորդական դերակատարություն ունենալու առնչությամբ:

Ու մինչ հիշատակված այցելությունները դեռեւս մնում են ծրագրային ու պիտի դառնան իրականություն, իրականացման փուլում է Ադրբեջանի նախագահի գլխավորած պատվիրակության այցելությունը Թուրքիա: Բնավ էլ պատահական չեն այցելությունների այս հերթագայությունները, հատկապես որ եռօրյա այցի ընթացքում Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերի գլխավորած պատվիրակությունը միայն այսօր է հանդիպելու Թուրքիայի վարչապետ Էրդողանի ու այլ պաշտոնատար անձանց հետ:

AZG NEW PDF.qxd 31/03/2010 22:21 Page 1

ԱԶԳ

Իրացման գոտի՞

Կոզեռնի բնակիչները «Լոկալ դիվելոփերզի» ճորտերը չեն

Կառավարությունը պարտավոր է պաշտպանել նրանց՝ 6 տարի շարունակ ոտնահարվող իրավունքները

Ուղիղ 6 տարի առաջ, Հայաստանի կառավարության 2004-ի մարտի 31-ին որոշմամբ, Երեւանի Պուշկինի այգուն հարող տարածքը կամ Կոզեռն թաղամասը (Պռոշյան եւ Դեմիրճյան փողոցներով պարփակված տարածքը) հայտարարվեց իրացման գոտի: Այդ օրվանից թաղամասում բնակվող 132 ընտանիքները դարձան կառավարության այդ որոշման պատանդները:

Նախ նշենք, որ թաղամասի բնակիչներն ավելի ուշ իմացան, որ իրենց թաղամասը դարձել է իրացման գոտի, երբ առիթ ունեցան շինարարություն սկսելու կամ փաստաթղթային այլ խնդիրներով առնչվելու Երեւանի քաղաքապետարանի, կադաստրի պետական կոմիտեի եւ այլ պետական կառույցների հետ: Մասնավորապես, Երեւանի քաղաքապետարանում նրանց ասվեց, որ իրացման գոտիներում շինարարությունն արգելվում է, քանի որ թաղամասում նախատեսվում է «իրականացնել բնակելի եւ հասարակական կառուցապատում»: Թաղամասի բնակիչներին մնում էր միայն սպասել:

2004-ին բնականաբար ոչ մի իրացում, առավել եւս կառուցապատում չսկսվեց, որովհետեւ դեռեւս պատրաստ չէին ոչ կառուցապատման նախագծերը, ոչ էլ կառուցապատման մրցույթ էր հայտարարված: Բացի այդ, բնակիչներից շատերի սեփականության իրավունքների ճանաչման խնդիրը կար: Վերոնշյալ ընտանիքների մեծ մասը, տասնյակ տարիներ ապրելով այդ թաղամասում, չէին կարողացել իրենց գույքի սեփականության վկայականը ստանալ: Հանուն արդարության պետք է նշել, որ այս խնդիրը հետագայում՝ 2006-2007 թվականներին, կառավարությունն ու քաղաքապետարանը կարգավորեցին: Սակայն միայն այդքանը:

2004-ից մինչեւ 2007-ը Կոզեռն թաղամասի իրացման ուղղությամբ բացարձակապես ոչինչ չարվեց: Այդ ընթացքում մարդիկ յուրաքանչյուր տարի սպասեցին-սպասեցին, որ շուտով գործընթացը կսկսվի, եւ ավելի որոշակի կդառնան իրենց հետագա պլանները, բայց ապարդյուն: Կոզեռն թաղամասի իրացման հույսը թվում էր, թե իրական դարձավ 2007-ին, երբ իրացման գոտի հայտարարելուց 3 տարի հետո, Երեւանի քաղաքապետարանը վերջապես մայիսի 26-ին հայտարարեց այդ տարածքում կառուցապատող կազմակերպության մրցույթ: Մրցույթը տեղի ունեցավ: Հայտնի չէ, թե քանի կազմակերպություն մասնակցեց, բայց հաղթող ճանաչվեց «Լոկալ դիվելոփերզ» ընկերությունը:

Սակայն դրանից հետո եւս ամեն ինչ մնաց նույնը: Կարծես թե ոչ մրցույթ էր եղել, ոչ կառուցապատող էր ընտրվել: Ոչ ոք Կոզեռնի բնակիչներին չներկայացրեց փոխհատուցման պայմանագրերի առաջարկներ, շինությունների անկախ գնահատողը չհայտնվեց, կառուցապատման աշխատանքները սկսելու մասին որեւէ այլ տեղեկություն չտրվեց:

2007-ը խորհրդանական ընտրությունների տարի էր, եւ թաղամասի բնակիչները մտածեցին, որ այդ ընտրությունների ավարտից հետո գուցե անեծք դարձած իրացումը կսկսվի, բայց՝ ոչ: Հետո եկավ 2008-ը՝ իր նախագահական ընտրություններով եւ ՀՀՇ-ի հրահրած հետընտրական անկարգություններով ու անկայունությամբ: Նույն տարվա երկրորդ կեսին էլ նախ ռուս-վրացական պատերազմը խանգարեց, ապա սկսվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Այդ ընթացքում Երեւանի քաղաքապետարանի պաշտոնյաները հայտարարեցին, որ թաղամասի կառուցապատման նախագիծն արդեն պատրաստ է, ինչն ավելի շուտ նման էր կռվից հետո բռունցքներ թափահարելուն: Պարզ էր, որ 2008-2009-ին թաղամասի իրացումն ու կառուցապատումը չեն սկսվելու: Կառավարությունն էլ սիրահոժար ընդառաջեց կառուցապատողին եւ 2009-ի հունվարի 1-ին իրացման աշխատանքները սկսելու վերջնաժամկետը հետաձգեց մինչեւ 2011-ի հունվարի 1-ը: Իսկ որ այդ որոշման հետեւում հազարավոր մարդկանց շահեր եւ ճակատագրեր են, փույթ չէ՝ 5 տարի սպասել են, 2-ն էլ կսպասեն: Հիմա արդեն 1 տարուց ավելին անցել է: 9 ամիս հետո կլրանա իրացման աշխատանքները սկսելու արդեն երկարացված վերջնաժամկետը: Սակայն ոչ ոքի հայտնի չէ՝ «Լոկալ դիվելոփերզն» ի վերջո կբարեհաճի՞ սկսել իրացումը, թե՞ դարձյալ կդիմի կառավարությանը՝ խնդրելով նորից հետաձգել իրացումն սկսելու ժամկետը:

Համենայն դեպս, ներկա պահին ոչ Երեւանի քաղաքապետարանից, ոչ կառավարությունից հնարավոր չէ հարցի պարզ պատասխան ստանալ, ե՞րբ է սկսվելու եւ սկսվելո՞ւ է արդյոք իրացումն այս թաղամասում: Տպավորությունն այնպիսին է, որ այդ տարածքում ապրող բնակիչներն ընկերության ճորտերն են, որոնք ամրակցված են այդ տարածքին եւ իրավունք չունեն իրենց հայեցողությամբ տիրապետելու իրենց գույքը, իսկ կառավարությունն ու քաղաքապետարանը պարտական են «Լոկալ դիվելոփերզին» ու չեն կարողանում որեւէ կերպ պարտադրել նրան կատարել ստանձնած պարտավորությունը: Մինչդեռ իշխանությունները պետք է հիշեն, որ իրենք պարտական եւ հաշվետու են միայն ժողովրդին, այդ թվում նաեւ Կոզեռնի հարյուրավոր բնակիչներին, եւ պարտավոր են վերջապես պաշտպանել նրանց՝ արդեն 6 տարի շարունակ ոտնահարվող իրավունքները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ամեն երեխա իր հոգսը, իր ուրախությունն ունի»

Մեկհարկանի քարե տան առջեւ մի երիտասարդ փայտ է կտրում, իսկ փիչ հեռու 3 աղջիկներ են խաղում: Մի փոքր անց դաշտից նրանց երկու եղբայրները տուն կգան, որից հետո ընտանիքը կհավաքվի ճաշի սեղանի շուրջը: Վարդանյաններին Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղում բոլորն են ճանաչում: Գյուղի ամենաբազմանդամ ընտանիքն է: Վռամ Վարդանյանը՝ ընտանիքի հայրը, սեղան է նստում 7 զավակների հետ: 4 տղա եւ 3 աղջիկ ունի: Մեծն արդեն 25 տարեկան է, փոքրը նոր է առաջին դասարան գնացել: Երկու որդիներն արդեն ծառայել են բանակում, այժմ երրորդն է սահմանները պաշտպանում:

Երվանդաշատը հայ-թուրքական սահմանի մոտ է, գյուղի կենտրոնից տասը րոպե քայլելու դեպքում անմիջապես երկու երկրների սահմանին կհասնեք: Այստեղ Վարդանյաններն ապրում են քսան տարուց ավելի: Մինչ այդ Շիրակի շրջանի գյուղերից մեկում տուն ունեին, սակայն երկրաշարժից տունն ավերվեց: Վարդանյանները, այն ժամանակ դեռ երկու երեխաների հետ, հաստատվեցին Երվանդաշատում:

Այսօր արդեն 46-ամյա Վռամ Վարդանյանին դաշտում եւ անասուններին պահելիս օգնում են երեք տղաները: «Կաշխատենք, հող կմշակենք ու կապրենք: Ամենալավն այն է, որ երեկոյան միասին նստում, հաց ենք ուտում», ասաց **Վռամ Վարդանյանը**: Նրա կինը՝ **Անահիտ Վարդանյանը**, պատմում է, որ ապուր եփելիս մեկ դույլ ջուր է օգտագործում, իսկ եթե երեխաների սիրած տապակած կարտոֆիլն է պատրաստում, ապա ողջ ընտանիքի համար նվազագույնը 5-6 կիլոգրամ կարտոֆիլ է անհրաժեշտ: «Շատվոր ենք, օրը մի քանի անգամ ճաշ եմ եփում», ասաց Անահիտը: Ընտանիքի համերաշխության համար նա պահանջում է, որ երեխաներն ազնիվ լինեն միմյանց հանդեպ եւ, որ կարեւորն է, «միայն իրենց աշխատանքով գումար վաստակեն»: «Իմ երեխաները բոլորից տարբերվում են, համեստ են, աշխատասեր ու իրենց հորը թիկունք են կանգնում», հպարտությամբ գովաբանում է տիկին Անահիտը:

Հոկտեմբերին Վարդանյանները միանգամից երեք զավակի ծնունդն են նշում: Այդ օրը սենյակի կենտրոնում դրված մեծ սեղանը չի բավականացնում բոլոր հյուրերի համար: «Ամեն երեխա իր հոգսը, իր ուրախությունն ունի», ասում է Անահիտը: Իրենց տունը Վարդանյանները կառուցում են արդեն քսան տարի: Յուրաքանչյուր երեխայի ծնվելու հետ անհրաժեշտ է լինում ավելացնել կամ փոփոխել սենյակները: Յուրաքանչյուր սենյակի կենտրոնում վառարանն է դրված, իսկ պատի երկայնքով մահճակալներն են շարված: Օրվա մեծ մասն այստեղ են լինում նաեւ հարեւանների ու հարազատների երեխաները: «Երբ միանգամից 8-9 երեխա է խաղում մեկ սենյակում, շփոթում եմ, թե որն է իմը, որը՝ չէ», պատմում է Վռամ Վարդանյանը՝ հետեւելով խաղացող երեխաներին:

Երվանդաշատից հեռանալու մասին չեն էլ մտածում: Սահմանային գյուղում ապրելու դժվարություններն ու բազմանդամ ընտանիքի հոգսերը նրանց համար առօրյա են դարձել, գյուղից եւ իրենց քարակերտ տնից դուրս իրենց կյանքն այլ կերպ չեն պատկերացնում: «Աշխատանք եւ առողջություն լինի, մնացած ամեն ինչ կստեղծվի», ասում է Վռամ Վարդանյանը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆԱՄԱԿ՝ ԼՂՀ-ԻՑ

Ներդնողին ունեզրկում են

Անշուշտ խմբագրությունս հնարավորություն չունի տեղում ստուգել ստորեւ հրատարակվող նամակում բերված փաստերը եւ ստիպված է բավարարվել նամակագրի տրամադրած փաստաթղթերի տվյալներով: Հույս ունենք ստանալ ԼՂՀ համապատասխան մարմինների արձագանքը: Քանի որ հարցը վերաբերում է ազգային կարեւորագույն հիմնախնդրին՝ Արցախի վերաբնակեցման, ներդրումների միջոցով այն զարգացնելու նպատակներին: Չենք ուզում հավատալ, որ ազատամարտում որդի կորցրած, մյուս որդիներով Ռուսաստանում չարքաշ աշխատանքով փող խնայած եւ այն իր հայրենի հողում շահագործման դրած այս կնոջ հետ նման կերպ կարող են վարվել տեղի չինովնիկն ու պատգամավորը: Նրան եւ ընտանիքին ոչ միայն պետք է պաշտպանել, այլեւ քաջալերել, եւ ոչ թե թողնել որ զոհ գնան զոռբայությանը:

ԽՄԲ.

Հարգելի խմբագրություն

Ես Ռուսաստանի քաղաքացի եմ, ԼՂՀ պաշտպանության մասնակից: Որոշեցինք ընտանյոք Ռուսաստանից վերադառնալ Ղարաբաղ եւ մասնակցել հայրենիքի վերականգնմանը, գյուղատնտեսության մեջ ներդնել 120 հազար դոլար: Մեր ծրագրերի մասին իմացավ ԼՂՀ ԱԺ պատգամավոր Ռ. Լ. Հյուսնունցը (Ղարաբաղում նա հայտնի է Ուսնունց ազգանվամբ) եւ սկսեց համոզել մասնակցելու ջերմատնային տնտեսության շինարարությանը: Առաջարկեց դառնալ բիզնեսի գործընկեր, խոստացավ ամենատեսակ, նաեւ՝ ֆինանսական օգնություն 300 հազար դոլարի չափով, բայց խաբեությամբ մեզ հասցրեց ֆինանսական փակուղի: Այդ գործչի ամբողջ արկածախնդրությունը նկարագրելն անհնար է: Մենք նամակներով դիմեցինք ԼՂՀ նախագահ Բ. Ս. Սահակյանին: Նա մեզանից խստիվ հեռացրեց Ռ. Լ. Հյուսնունցին, որպեսզի վերադարձվի 17 մլն դրամ գործընկերական գումարը: Մենք ստեղծեցինք «Ալվարդ-գրուպ» նոր ֆիրման, իսկ ԼՂՀ վարչապետը խոստացավ օգնել վարկով: Դա 2009-ի մայիսին էր, եւ մենք համաձայնեցինք: Բայց օգնությունը ստացվեց շատ ուշ՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի միջամտությունից հետո միայն: Մենք հանդիպեցինք ԼՂՀ նախագահի հետ, խոսեցինք: Նա մեզ ուղարկեց վարչապետի մոտ եւ ասաց, որ ինքը երաշխավոր է: Սակայն դրանից հետո էլ խարդավանքով եւ խորամանկորեն սարքված խոչընդոտներով պատգամավոր Ռ. Լ. Հյուսնունցը իր կապերի միջոցով վարկի ստացումը հետաձգեց 2009-ի աշնան վերջին: Մեզ մեծ դժվարությամբ տվեցին այդ 40 մլն դրամանոց վարկը, որից ուզում էինք հրաժարվել, հասկանալով այդ վարկի հետագա անշահութաբերությունը: Եվ այստեղ Ռ. Լ. Հյուսնունցը եւ նրա կամակատարները դիմեցին ակնհայտ սպառնալիքի եւ բռնության: Կտրեցին մեր էներգիան, վնաս հասցրին ջերմոցին, գիշերով եկան օբյեկտ եւ սպառնացին հաշվեհարդար տեսնել ընտանիքիս հետ եւ շանտաժով ստիպեցին «Ալվարդ-գրուպ» ՍՊԸ-ից ստանալ 20 750 000 դրամ, այդ փողերը խլելով մեր 40 մլն դրամից: Մեր դեմ թխվեց զրպարտչագիր: Նա մտնում է նախագահի եւ վարչապետի աշխատասենյակներ, եւ այլեւս մեզ ոչ ոք չէր լսում: Այնպես ստացվեց, որ մենք մեր ներդրումներով հայտնվեցինք շատ ծանր վիճակում, նաեւ 41 մլն դրամ պարտք ունեցանք: Մենք ուզում էինք վաճառել մեր ջերմոցը եւ փակել պարտքը, բայց դա էլ չհաջողվեց, քանի որ Ռ. Լ. Հյուսնունցը բոլորին վախեցրել էր, որ դա իր ջերմոցն է: Աշխատատեղեր ստեղծելու եւ բերք հավաքելու փոխարեն պատգամավոր Ռ. Լ. Հյուսնունցը խանգարում է: Մենք առաջինը եւ վերջինը չենք, որ հայրենության: Կարելի է երկար խոսել նրա գործունեության մասին, բայց չենք կարող ամեն ինչ գրավոր շարադրել: Իմ ընտանիքը պաշտպանել է այս հողը եւ հետեւությամբ չի տա ինչ-որ մեկին: Դիմել ենք Հայաստանի եւ Ղարաբաղի բոլոր այյաններին, բայց շատերը չեն համարձակվում տեղեկացնել այդ խնդրի մասին: Վիրավորական է. Ղարաբաղում խաբել են հերթական ներդնողին: Բանն այն է, որ ժողովուրդը չի հավատում լավ ապագային եւ մեզ նայելով համոզվում է պետության անզորությանը: Ներդնողներին հրավիրում են երկիր, սակայն ուրիշները պատրաստ են նրանց կրկին ու կրկին խաբելու եւ «վտարակների» վերածելու: Իշխանություններին մեր դիմելն անտեսվել է բազմիցս: Սա՛ է խնդիրը:

Շուրջ 1500 քմ տարածք զբաղեցնող ջերմոցն ու հարակից շինությունները գտնվում են Ասկերանի շրջանի Շողբուլաղի տարածքում, Տիգրանակերտ հնավայրի մոտ:

Ջերմոցում արդեն առաջին բերքն էր հասունանում:

Հարգանքներով՝
ԱԼՎԱՐԴ ԱԹԱՅԱՆ

AZG NEW PDF.qxd 31/03/2010 22:21 Page 1

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Պատրիարք Կիրիլը՝ ֆունդամենտալ քրիստոնեության երկրում

Թող բնավ էլ բաբլոն չինչի, եթե ասեմ, որ Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի այցը Հայաստան լայնորեն լուսաբանվեց ռուսաստանյան ԶԼՄ-ներում: Իրոք շատ էին հրապարակումները: Անշուշտ, դրանց զգալի մասը տեղեկատվական էր՝ եկավ, շուրով ընդունեցին, եղան բազմաթիվ տպավորիչ հանդիպումներ, համատեղ կրոնական ու աբխարհիկ միջոցառումներ եւ այլն:

Սակայն Կիրիլը այն անհատականությունը չէ, որի գործողություններն ու հայտարարությունները սահմանափակվեն սոսկ արձանագրայինի շրջանակներում: Նշվում է, որ նրա օրոք ռուս եկեղեցին, աբխարհիկ լեզվով ասած, ծավալել է ակտիվ արտաքին քաղաքականություն, եւ այս իմաստով հայ եկեղեցին նրա համար կարեւոր գործընկեր է: Եվ դա անկախ այն բանից, որ երկու եկեղեցիների միջեւ կան աստվածաբանական տեսակետների տարբերություններ:

Ռուսաստանյան լրատվամիջոցներում, սակայն, ամենամեծ ուշադրության ու մեկնաբանման արժանացավ Երեւանի պետական համալսարանի դասախոսական կազմի եւ ուսանողության հետ հանդիպման ժամանակ նրա ունեցած ելույթը: Այն ինչ-որ տեղ համարվեց «ծրագրային», քանի որ արտացոլվեցին այն համապարփակ համաքրիստոնեական մտքերը, որոնք արտահայտված են այդ օրերին Հայաստանում լույս տեսած նրա երկու գրքերում:

Հերթական անգամ պատրիարք Կիրիլը իր խոր մտահոգություններն ու երկյուղներն արտահայտեց Եվրոպայում քրիստոնեական հավատի շարունակվող անկման մասին, երբ սեկուլյար լիբերալիզմը ձգտում է կրոնը լրիվ դուրս մղել հասարակական կյանքից, որի հետեւանքով առաջանում է «նոր իրողություն», Կիրիլի բառերով՝ «քրիստոնեայացություն»: Հատուկ ընդգծվում է, որ մարդու իրավունքների լիբերալ ըմբռնման քննադատությունը Երեւանում հնչել է շատ ավելի սուր, քանզի հիրավի դրված է համայն քրիստոնեական քաղաքակրթության գոյության հարցը: Համոզմունք է հայտնվում, որ արդի աբխարհում քրիստոնեական եկեղեցու դերի նսեմացման թեմայի նման սկզբունքային արծարծման վայրն էլ պատահական չէր ընտրված. մոսկովյան թերթերից մեկի սրամիտ արտահայտությամբ՝ Հայաստանը դիտվում է որպես ֆունդամենտալ քրիստոնեության երկիր:

Քանի որ պատրիարք Կիրիլը իր երկրում դիտվում է նաեւ որպես ազդեցիկ քաղաքական գործիչ, ապա տեղի լրատվամիջոցներն առանձնացնում էին նաեւ նրա մոտեցումներն ու հայտարարությունները հայ ժողովրդին հուզող որոշ ներկա ու պատմական հրատապ խնդիրների վերաբերյալ՝ ցեղասպանություն, Ղարաբաղ, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերություններ եւ այլն:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Միգրանտների հո՞սքն է պատճառը մոսկովյան ազգամիջյան խնդիրների

Մոսկվայի ծայրամաս, շուկա, սառնամանիք: Այս պատկերը, կարծում ենք, ծանոթ է շատերին: Ծանոթ է նաեւ այն, որ մոսկվացին երբեք իրեն թույլ չի տա կանգնել շուկայում եւ մթերք վաճառել, ցուրտ ձմռանը բաց տարածում շինարարություն անել, սառը ջրով մեքենա լվանալ եւ այլն, եւ այլն: Այս ամենը Ռուսաստանի մայրաքաղաքում անում են միգրանտները: Ընդ որում՝ ոլորտ առ ոլորտ բաժանված՝ տարբեր ազգությունների միջեւ: Եթե հայերին «տրված» է հիմնականում շինարարությունը, ադրբեջանցիներին՝ մրգաբանջարեղենային, ծաղկի բիզնեսը, ապա միջինասիացի միգրանտները Մոսկվայում հիմնականում զբաղված են փողոցային հավաքարարությամբ, բեռնակիրությամբ եւ այլ՝ համեմատաբար ցածր վարձատրվող աբխատանքերով: Ռեստորանային բիզնեսում արդեն նկատվում է վրացիների ներկայությունը, թեեւ հայերն ու ադրբեջանցիները այստեղ էլ ունեն իրենց ձեռագիրը:

Ինչեւէ, այնպես է ստացվում, որ նախկին Սովետական երկրի մայրաքաղաքը պարզապես չի կարող ապրել առանց նախկին սովետական քաղաքացիների. մոսկվացի ռուսներից շատերի «սիրած բիզնեսն» է թեկուզ հիպոթեկով բնակարաններ գնելը եւ դրանք հանձնելը միգրանտներին, իսկ ստացված եկամուտների հաշվին կարելի է նաեւ չաբխատել: Սակայն վրա հասած համաբխարհային ճգնաժամն իր ազդեցությունն ունեցավ ռուսական հյուրընկալության վրա: Յուրաքանչյուր տարի Մոսկվայի քաղաքային իշխանությունները կրճատում են միգրանտների աբխատանքային քվոտաները: Անցյալ տարի Ռուսաստանի մայրաքաղաքում աբխատանքի իրավունք էր տրվել 300 հազար միգրանտների, իսկ այս տարի քաղաքապետ Յուրի Լուժկովի հանձնարարությամբ այդ թիվը պետք է հասցնել 200 հազարի: Մոսկվայի աբխատանքի եւ զբաղվածության դեպարտամենտի ղեկավար **Օլեգ Նեստերեբսկին** հայտարարել է, որ իրենք այդ խնդիրն անպայման կկատարեն: «Միգրացիոն հոսքը դեպի Մոսկվա աճում է, ինչը սոցիալական եւ ազգամիջյան լուրջ խնդիրներ է առաջացնում», շեշտել է Մոսկվայի քաղաքապետը: Լուժկովը, իհարկե, չի նշել, թե որքա՞ն ազգամիջյան խնդիրներ են առաջանում, բորբոքվում, արյունահեղ ավարտ ունենում «սափրագլուխների» առկայությունից: Ի՞նչ ազգամիջյան խնդիր կարող է առաջացնել, օրինակ, հասարակ տաջիկ միգրանտը, որը հայրենիքում աբխատանք չգտնելով եկել է Մոսկվա եւ փողոցներն է ավլում, իսկ գիշերը տուն վերադառնալիս հանդիպում է «սափրագլուխներին»: Փաստորեն վերոհիշյալ տաջիկը, այնուամենայնիվ, կարող է առաջացնել խնդիրներ, քանի որ Մոսկվայի իշխանությունները միգրանտների հոսքը կարգավորող հայեցակարգ են մշակել, որի գլխավոր նպատակն է միգրանտներին որքան հնարավոր է քիչ աբխատանք տալ:

«Ազատություն» ռադիոկայանի ռուսական ծառայությանը տված հարցազրույցում փաստաթղթի հեղինակներից՝ Մոսկվայի քաղաքապետարանի տարածաշրջանների կապերով ու ազգային քաղաքականությամբ զբաղվող կոմիտեի փոխնախագահ **Եվգենի Չերնեցովը** նկատել է, որ դեռեւս 4-5 տարի առաջ կարծիք կար, որ որքան շատ միգրանտներ գան Մոսկվա, այնքան լավ. «Բայց մենք հետո արդեն գտանք, որ պետք է օպտիմալացնել միգրանտների հոսքերը», նշել է Չերնեցովը: Իսկ Միգրանտների ֆեդերացիայի նախագահ **Ամին Մուխամադը** նկատել է, որ մոսկովյան իշխանությունների միգրացիոն քաղաքականությունը շատ հարցեր է առաջացնում. «Մոսկվայի կառավարությունը հայտարարել է, թե միգրանտներն իրենց պետք չեն, բայց այդ մարդիկ այստեղ են, աբխատանքից հեռացվելուց հետո կամ չստանալով աբխատանքի իրավունք, նրանք սկսում են աբխատել ստվերային բիզնեսում: Իսկ, որպես ընդունող կողմ, Մոսկվան պայմաններ չի ստեղծում միգրանտների համար», ընդգծել է Մուխամադը:

Բոլոր ժամանակներում էլ, անգամ Չերնեցովի ասած «4-5 տարի առաջ», Մոսկվան պայմաններ չի ստեղծել աբխատանքային միգրանտների համար: Միգրանտը միշտ հանդիպել է փաստաթղթային, բյուրոկրատական քաշքշուկի, որի ավելորդ ժամանակատար լինելով է հենց պայմանավորված, որ շատ միգրանտներ, օգտվելով ոլորտում առկա կոռուպցիայի հսկայական չափերից, դիմում են «լեւի գրանցումների»: Անշուշտ չի կարելի չհամաձայնել, որ այսօր Ռուսաստանի մայրաքաղաքում կան կոնկրետ հայ՝ հիմնականում երիտասարդ, բանակից «փախած» միգրանտներ, որոնք չեն աբխատում, որոնք պարզապես թափառում են, որոնց հիմնական նպատակն է «ռուս աղջիկ կապել» ու լուծել քաղաքացիության հարցը: Այսօրինակ միգրանտները պետք է լինեն ոչ միայն Մոսկվայի իշխանությունների գլխացավանքը, այլեւ տվյալ երկրի իշխանությունների: Սակայն մյուս կողմից էլ փաստ է, որ Մոսկվան այն քաղաքն է, որը պարզապես չի կարող ապրել առանց արտասահմանյան, էժան, «խաբելու համար հարմար» աբխատուժի, որին կարելի է աբխատեցնել նույնիսկ այն ժամանակ, երբ փողոցում սառնամանիք է, որը համաձայն է թեկուզ փողոցում գիշերել, միայն հնարավորություն ունենա աբխատելու:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԻ ԱԿԱՆՋԸ ԿԱՆՉԻ

Սերբիան ներողություն խնդրեց Սրեբրենիցայի զարդերի համար

Սերբիայի խորհրդարանը երեկ ընդունած բանաձեւով դատապարտել է 1995-ին Սրեբրենիցայում բոսնիացի մահմեդականների զանգվածային սպանությունը եւ ներողություն է խնդրել զոհերի ընտանիքներից: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

«Սերբիայի խորհրդարանը կտրականապես դատապարտում է 1995-ի հուլիսին Սերբիայի բոսնիացի մահմեդականների դեմ իրականացված ոճրագործությունը, ինչպես դա բնութագրված է ՄԱԿ-ի միջազգային դատարանի ձեւակերպման մեջ», ասվում է փաստաթղթում, որի օգտին քվեարկել են նիստին ներկա գտնված 173 պատգամավորներից 127-ը:

Սերբ օրենսդիրները նաեւ ցավակցություն են հայտնել զոհվածների ընտանիքներին, քանի որ «հնարավոր ամեն ինչ չարվեց ողբերգության կանխման համար»:

Ռատկո Մլադիչի ղեկավարությամբ բոսնիացի սերբերի իրականացրած գործողության ընթացքում սպանվեցին մոտ 8 հազար մահմեդականներ: Նախկին Հարավսլավիայի հարցերով զբաղվող Միջազգային տribունալը Մլադիչին մեղադրում է ցեղասպանության մեջ: Նա հետախուզման մեջ է եւ հավանաբար թաքնվում է Սերբիայում: Խորհրդարանը խոստացել է շարունակել համագործակցությունը Միջազգային տribունալի հետ, որպեսզի Մլադիչը ձերբակալվի եւ դատվի:

Միջազգային դատարանը եւ Միջազգային տribունալը Սերբիայի 1995 թ. գործողությունները համարում են «Ցեղասպանություն», սակայն խորհրդարանի ընդունած բանաձեւում այդ բառը չի օգտագործվում, նշում է Ֆրանսպրեսը:

Սրեբրենիցայի զանգվածային սպանությունը դատապարտող բանաձեւը Սերբիայի հերթական քայլն է դեպի Եվրամիություն տանող ճանապարհին: ԵՄ-ը Միջազգային տribունալի հետ գործակցությունը գլխավոր պայմաններից մեկն է համարում Սերբիայի ԵՄ անդամության թեկնածու դարձնելու համար: Սերբիան Եվրամիությանն անդամակցելու հայտ է ներկայացրել 2009-ի դեկտեմբերին եւ հույս ունի թեկնածու դառնալ 2011-ին:

Կորած իրանցի միջուկագետը ԱՄՆ-ում է



2009 թվականի ամռանը անհետ կորած իրանցի միջուկագետ ֆիզիկոս Շահրամ Ամիրին, ինչպես պարզվում է, տեղափոխվել է ԱՄՆ եւ սկսել է համագործակցել ԿՀՎ-ի հետ: Այդ մասին հաղորդում է ABC News հեռուստաընկերությունը, վկայակոչելով հետախուզության աղբյուրներ: ԿՀՎ ներկայացուցիչները հրաժարվում են մեկնաբանել տվյալ տեղեկատվությունը:

Նշվում է, որ Ամիրի անհետացումը ԿՀՎ-ի մանրակրկիտ մշակած գործողության մի մասն է: Գործողության նպատակն էր գիտնականին հրապուրել ԱՄՆ-ի կողմը: Նաեւ հաղորդվում է, որ ԿՀՎ-ին հաջողվել էր միջուկագետ ֆիզիկոսի հետ կապ հաստատել երրորդ անձի միջոցով: Վերջինս ԱՄՆ-ի անունից Շահրամ Ամիրիին առաջարկել էր մեկնել Իրանից:

Կոնգրեսին ներկայացված ԿՀՎ-ի ամենամյա գաղտնագրծված հաշվետվության մեջ ասվում է, որ Իրանը դեռ ունի միջուկային զենքի մշակման հնարավորություն: Սակայն գերատեսչությունը չունի ստույգ տվյալներ, թե այդ երկիրն իրոք մտադիր է զբաղվել նման զենքի արտադրությամբ:

Սպիտակ տան հակահաբեկչական պայքարի վարչության նախկին տնօրեն Ռիչարդ Քլարկը նշում է, որ իրականացված գործողության կարեւորությունը կախված կլինի այն բանից, թե ինչպիսի տեղեկություններ են հայտնի Ամիրիին: Վերջինս արդեն պարզաբանել է, որ Իրանի միջուկային ծրագրով զբաղվում է նեղ մասնագիտացման մի քանի գերատեսչություն: Քլարկը կասկածներ ունի, թե մեկ գիտնականի ԱՄՆ-ի կողմն անցնելը կօգնի լրջորեն վնասելու Թեհրանի միջուկային ծրագրերին:

Շահրամ Ամիրիին 2009-ի հունիսին կորել էր Սաուդյան Արաբիայի սրբավայրեր կատարած ուխտագնացության ժամանակ: Թեհրանը քանիցս ԱՄՆ-ին մեղադրել էր իրանցու առեւանգման մեջ եւ պահանջել էր վերադարձնել նրան: Սակայն Վաշինգտոնում հայտարարել էին, թե չգիտեն այդ մարդու գտնվելու վայրը:

Մամուլում արդեն ենթադրություններ են արվում, որ Ամիրին ինքն է որոշել անցնել ԱՄՆ-ի կողմը: Ամերիկացի լրագրողներից ոմանք կարծում են, որ հենց Ամիրիի անհետացումը Իրանի իշխանություններին ստիպեց խոստովանել երկրի տարածքում ուրանի հարստացման երկրորդ գաղտնի գործարանի գոյությունը:

Արտակարգ դրություն ԱՄՆ-ի հյուսիս-արեւելքում

ԱՄՆ-ի հյուսիսարեւելյան ծովափնյա մի շարք շրջաններում արտակարգ դրություն է հայտարարվել հեղեղումների վտանգի պատճառով: Ռոդ Այլենդի, Մասաչուսեթսի, Մեյնի, Կոնեկտիկուտի, այլ նահանգների ղեկավարները բարձր մարտավիճակի են բերել ազգային գվարդիայի զորքերը, որոնք սկսել են ավազապարկերով պաշտպանիչ կառույցներ ստեղծել ափերի երկայնքով եւ անհրաժեշտության դեպքում տեղաբնակներին կօգնեն հեռանալու վտանգավոր շրջաններից:

Ռոդ Այլենդի նահանգապետ Դոն Կարչիերիի խոսքերով, նահանգում սպասվում է վերջին 100 տարվա խոշորագույն հեղեղումը: ԻՏԱՌՏԱՍՍ-ը մեջբերում է նրա այն հայտարարությունը, որ «իրավիճակը կարող է լինել վաթսարագույնը»: Իր հեռուստաելույթում նահանգապետը չի բացառել որոշ շրջանների բնակիչների տարհանման հնարավորությունը:

ԱՄՆ-ի հյուսիս-արեւելքում հեղեղումների վտանգի պատճառը մի քանի օր անդադար տեղացող հորդ անձրեւներն են: Մարտ ամսին սա արդեն երկրորդ ցիկլոնն է տարածաշրջանում:

Բոստոնում (Մասաչուսեթս) միայն մարտին 33 սմ անձրեւ է տեղացել, մինչդեռ 1953-ին արձանագրված նախկին ռեկորդը 27,9 սմ էր:

Չրհեղեղի վտանգը առկա է նաեւ Նյու Յորքի եւ Նյու Ջերսիի նահանգներում: Դրանց որոշ շրջաններում ճանապարհներն արդեն ծածկված են ջրով: «Լա Գուարդիա» եւ «Նյուարք» խոշոր օդանավակայաններում արդեն չվերթեր են հետաձգվում:

Նախագահ Բարաք Օբաման ստորագրել է հայտարարություն, որով Նոր Անգլիայի բազմաթիվ շրջաններ համարվում են տարերային աղետի գոտիներ: Դա նահանգներին իրավունք է տալիս օգնություն ստանալու դաշնային կենտրոնից:

AZG NEW PDF.qxd 31/03/2010 22:22 Page 1

ԱԶԳ

Մշակույթ

Ականավոր գիտնականը

Գևորգ Չահուկյանի 90-ամյակի առթիվ

Այսօր լրանում է 20-րդ դարի երկրորդ կեսի համաշխարհային ճանաչում ունեցող, գիտության մեծ երախտավոր, հայ լեզվաբանության ականավոր ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, Եվրոպայի եւ ԱՄՆ-ի Լեզվաբանական ընկերությունների անդամ, ՀԽՍՀ պետական եւ Հայաստանի Հանրապետության բազմաթիվ մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի տնօրեն Գեւորգ Բեգլարի Չահուկյանի ծննդյան 90-ամյակը:

Ավելի քան 50 տարի նա աշխատեց հայ (եւ ոչ միայն հայ) լեզվաբանության անդաստանում: Իր հեղինակած 37 մենագրություններով, մոտ 180 գիտական հոդվածներով, ելույթներով ու թեզիսներով (դրանցից 72-ը՝ ռուսերեն եւ այլ լեզուներով) հետեւելով իր աշխարհահռչակ ուսուցչապետ Հրաչյա Աճառյանի օրինակին, գիտական բարձր մակարդակով անդրադարձել է հայ եւ ընդհանուր լեզվաբանության բոլոր բնագավառներին՝ ուղղագրություն եւ ուղղախոսություն, բառագիտություն ու ստուգաբանություն, ձեւաբանություն ու շարահյուսություն, ոճաբանություն ու տեքստաբանություն, բարբառագիտություն ու լեզվի պատմություն եւ բոլոր բնագավառներում ասել է իր նոր ու հիմնավոր խոսքը՝ ելնելով լեզվաբանության զարգացման նորագույն տվյալներից: Նրա աշխատություններում տեսական լեզվաբանության բազմաթիվ հարցեր ստացել են նոր լուսաբանումներ:

Ուղիղ 60 տարի՝ սկսած 1945-ից մինչեւ իր կյանքի վերջը՝ 2005 թ. հուլիսի 6-ը, աշխատելով Երեւանի պետական համալսարանում (այստեղ եղել է նաեւ օտար լեզուների ամբիոնի վարիչ), ինչպես նաեւ հիմնադրման օրվանից՝ 1991 թ. Հրաչյա Աճառյանի համալսարանում, Չահուկյանն իր բարձրորակ դասախոսություններով ու մարդկային բարձր հատկանիշներով կրթեց հայ լեզվաբանների մի ամբողջ սերունդ:

1962-ից մինչեւ կյանքի վերջը տնօրինելով լեզվի ինստիտուտում՝ նա ածեցրեց հայ լեզվաբանների մի ամբողջ փաղանգ, որի ներկայացուցիչներից շատերն այժմ դասավանդում են մեր հանրապետության եւ նրա սահմաններից դուրս եղած բուհերում, ինչպես նաեւ գիտական աշխատանքներ են կատարում Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում:

Բնականաբար, լրագրային մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ խոսել բազմավաստակ ու բեղմնավոր գիտնականի բոլոր տեսությունների ու կոթողային աշխատությունների մասին, հետեւաբար անդրադառնանք մեծ լեզվաբանի մի քանի աշխատություններին:

Չահուկյանի առաջին մենագրությունը՝ «Քերականական եւ ուղղագրական աշխատությունները հին եւ միջնադարյան Հայաստանում» գիրքն է (Երեւան, 1954), որտեղ հեղինակը, ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր աշխատությունների ընձեռած նյութերի հիման վրա հանգամանորեն քննել է 5-15-րդ դարերի հայ քերականագիտության պատմության զարգացման ուղին: Սրան հաջորդեց նրա «Հին հայերենի հոլովման սիստեմը եւ նրա ծագումը» (1959) մենագրությունը, որը նվիրված է հայոց լեզվի պատմահամեմատական քերականության հնդեվրոպական հոլովման համակարգի քննությանը:

«Լեզվաբանության պատմություն» երկհատոր (1960 եւ 1962) ստվարածավալ աշխատությունը (1235 էջ) Չահուկյանի ընդհանուր լեզվաբանական բնույթի աշխատությունների մեջ յուրահատուկ արժեք ունի, որտեղ հեղինակը ներկայացնում է ընդհանրապես լեզվաբանության սկզբնավորումն ու զարգացումը՝ սկսած հնագույն ժամանակներից (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ, մինչեւ մ.թ. 20-րդ դարի կեսերը), քննության նյութ դարձնելով Հին Եգիպտոսն ու Միջագետքը, Հնդկաստանն ու Չինաստանը, Ամերիկան ու Եվրոպան: Գրքում նա մանրազնին քննում է նշված երկրների՝ տարբեր ժամանակների լեզվաբանական ուղղությունները, ինչպես նաեւ լեզվաբանության պատմության մեջ նշանակալից դեր ունեցած մի քանի տասնյակ լեզվաբանների տեսությունները: Այս աշխատությունը լուրջ ներդրում է ոչ միայն հայ, այլեւ ընդհանուր լեզվաբանության բնագավառում եւ դասագրային արժեք ունի:

1964-ին լույս տեսավ Չահուկյանի «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատությունը, որտեղ նա քննում է հայոց լեզվի պերիոդիացիայի հարցերը եւ հայոց լեզվի շրջանաբաժանումները բաժանում է 3 շրջանի՝ հին, միջին եւ նոր, որոնցում մանրամասնորեն քննում է գրաբարի, կիլիկյան հայերենի (միջին շրջան) եւ աշխարհաբարի էական հատկությունները: Այս գրքի անմիջական շարունակությունն է «Հայոց լեզվի զարգացումը եւ կառուցվածքը» (1969) հայերենագիտական շատ կարեւոր մենագրությունը:

Մեծ են նաեւ հմուտ լեզվաբանի ներդրումները հայ բարբառագիտության բնագավառում, որի վերաբերյալ նա գրել է մի քանի հոդվածներ՝ տպագրված «Вопросы языкознания», «Պատմաբանասիրական հանդես», «Բանբեր Երեւանի համալսարանի» հանդեսներում: 1972-ին լույս տեսավ նրա «Հայ բարբառագիտության ներածություն» նմանը չունեցող աշխատությունը, որտեղ նա վճռական ու համոզիչ պատասխաններ է տալիս բարբառագիտության հետ կապված գրեթե բոլոր կնճռոտ հարցերին եւ որպես բարբառների դասակարգման սկզբունք քննում է 100 հատկանիշ՝ սկսելով 5-րդ դարից մինչեւ մեր օրերը, եւ իր ուսուցիչ Աճառյանի նման հավատում է այն տեսակետը, որ գրաբարից առաջ էլ հայերենն ունեցել է իր բարբառները, որոնց տարբերակումն ավելի թույլ է եղել:

Այս գրքից 2 տարի հետո՝ 1974-ին, լույս տեսան անդուլ ու անդադրում աշխատող գիտնականի 2 ծավալուն աշխատությունները՝ «Գրաբարի քերականության պատմություն» (559 էջ) եւ «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (587 էջ) անփոխարինելի դասագրքերը, որոնցից հատկապես երկրորդը յուրահատկությամբ դասախոսի ու լեզվաբանի սեղանի գիրքն է, առանց որի հնարավոր չէ լսարան մտնել կամ լեզվաբանական աշխատություն գրել: Այս գրքում հեղինակը տալիս է լեզվական կառուցվածքի ամբողջական նկարագրությունը՝ նոր մեկնաբանություններով, քննարկում է լեզվաբանական կաղապարները, ճշգրտում լեզվական մակարդակներն ու դրանց քերականական կարգերը: Այսպես՝

1. Հնչյունաբանական մակարդակում խոսում է հնչյունի եւ հնչույթի, հնչաշղթայի եւ հնչյունափոխության մասին:

2. Բառագիտության բաժնում խոսում է անկախ եւ կախյալ ձեւույթների եւ դրանց հետ կապված պարզ եւ բաղադրյալ բառերի մասին:

3. Ձեւաբանական մակարդակում տալիս է խոսքի մասերի իր դասակարգումը եւ, հետեւելով Մանուկ Աբեղյանի տեսությանը, ընդունում է 5 հոլովի համակարգը, նորովի է մեկնաբանում բայերի դիմավոր եւ անդեմ ձեւերի տեսությունը:

4. Շարահյուսական մակարդակում շարահյուսությունը սահմանում է որպես բառակապակցությունների, նախադասությունների եւ նախադասությունների կապակցության ուսմունք: Այստեղ քննում է նաեւ նախադասության քերականական կարգերը, որոնցում վճռական տեղ է հատկացնում սորոգմանը, սահմանում ու քննում է նաեւ շարույթը:

Իր վերջին գրքում՝ «Շարահյուսական ուսումնասիրություններ» (2003), Չահուկյանը հավելում է նաեւ տեքստային (հենքի) մակարդակը, ուր քննում է վերաշարահյուսական իրողությունները՝ պարբերություն եւ տեքստ:

Չմոռանանք հատուկ ընդգծել, որ այդ բազմավաստակ գիտնականը, այդքան զբաղված լինելով հանդերձ, ժամանակ է տրամադրել նաեւ բազմաթիվ գրքերի ու հոդվածների խմբագրմանը՝ տարբեր լեզուներով. նա եղել է նաեւ ԳԱ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» երրորդ հատորի գլխավոր խմբագիրը (574 էջ): Կատարել է նաեւ բազմաթիվ ստուգաբանություններ:

Մեծ մարդկանց մարդկային նկարագիրը նույնպես դաստիարակչական ուսանելի արժեք ունի: Չահուկյանի նախնիները Գողթան գավառից էին, Մովսես Խորենացու վկայությամբ՝ մարդամոտ, խոսքաշեն, արվեստ, գիր ու գրականություն, հատկապես բանաստեղծություն սիրող մարդիկ են եղել (իսկ ինքը ծնվել է հայրենիքից Տաշիր ներգաղթած ծնողների Մեծավան գյուղում 1920-ի ապրիլի 1-ին): Նա ժառանգել էր իր նախնիների դրական բոլոր հատկանիշները. բարի էր, մարդամոտ, ասող-խոսող, սիրում էր հումորը, հաճախ էր սրամիտ անեկդոտներ պատմում ու սրախոսություններ անում, գրում էր նաեւ բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել առանձին գրքով: Այս հատկանիշներով էլ նա նման էր իր ուսուցչապետ Հրաչյա Աճառյանին: Նա միաժամանակ անաչառ էր ու խստապահանջ, չէր հանդուրժում ցածրորակ ու թերի աշխատանքներ, այդ պատճառով էլ ինստիտուտի աշխատակիցներն ու իր ասպիրանտները իրենց ատենախոսությունները պաշտպանում էին թեկուզ ուշացումով, բայց բարձր մակարդակով:

Այսօր էլ մեզ համար թանկ է մեծ գիտնականի մարդկային նկարագիրը, իսկական գիտնականի կերպարը՝ գիտությանն իր անկաշառ նվիրումով ու անսահման աշխատասիրությամբ, անաչառությամբ ու խստապահանջությամբ:

ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Հիշողության թակոցներ

Հայոց ցեղասպանության հերթական վավերական վկայությունը

Հայոց մեծ եղեռնի զոհերի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը նախորդ օրը անձրեւային լռության մեջ այս էլ որերորդ գլխահակ հայորդուն ընդունեց. ծխում էր նորից հայի վիրավոր հոգին: Հուշակոթողին ծաղիկներ դրվեցին: Մարգարիտ Ազեմյան Ահներքն էր հարգանքի տուրք մատուցողը: Այստեղ էին ՀԲԸՄիության նախագահ Պերճ Սեդրակյանն ու իր կինը, վարչության անդամներ, ՀՕՖ-ի գործադիր տնօրենը, ՀԲԸՄ-ի պատանի սկաուտներ եւ ուրիշներ:

Մարգարիտ Ազեմյան Ահներքը **հեղինակն է «Դռան թակոց»՝ ականատեսի հուշագրության վրա կառուցված գրքի: Նրա մայրը՝ Եսթեր Միներաճյանը, ծնված պատմական Հայաստանի Ամասիա քաղաքում, 1915-ի ցեղասպանության ականատես ու այդ մղձավանջային իրականության կրողներից մեկն է եղել: Թուրքական կառավարության հրահանգով Ամասիայի հայերի բռնի տեղահանվող առաջին խմբի մեջ է եղել Եսթերն իր հարազատների հետ: Նա թուրքական դժոխքից փրկված այն սակավներից է, որոնք հրաշքով ապաստանեցին օտար երկրներում:**

Իրեն բաժին հասած ամերիկյան մայրցամաքում շատերի պես իր կյանքն էլ վերընձյուղվեց, թեեւ դժվարությամբ, բայց հունը գտավ: Սակայն արնածոր անցյալը չար մղձավանջի պես հետեւում էր: Թուրքական կոտորածների տարագիր հային իմնահրահանգված «մոռցիրը» այդպես էլ չկարողացավ իրեն ենթարկել տալ, թերեւս, ոչ մի հայի: Ստեղ-ստեղ արթնացող անցյալը իրար զուգահեռ երկու կյանք ստեղծելով, այլեւս անակտելի տարր էր դառնում: Եսթերի դուստրը՝ Մարգարիտը, որպես «ունկնդիր է» ականատես լինում այդ զուգահեռ իրականությանը: Եվ երբ 1999-ին 99 տարեկանում մայրը լռում է երկրային կյանքը, իր հետ տանում է նաեւ հիշողությունների այս ծանր բեռը: Բայց անցյալը, դարձյալ կա, մնում է՝ պահպանված Մարգարիտի գրառումներում, ձայնագրություններում, որը 2007-ին արդեն որպես գիրք ներկայացվեց հանրությանը: Տպագրվեց ԱՄՆ-ում, անգլերենով եւ անմիջապես ուշադրություն գրավեց, նույն տարին ստացավ Մարդասիրական մրցանակ եւ «Լավագույն գրքի» կոչում, հաջորդ տարին Նյու Յորքի գրքի տնավաճառի հաղթողի կոչման արժանացավ՝ «Լավագույն պատմական հուշագրություն» անվանակարգում:

Գիրքը հայերեն թարգմանվեց եւ լույս տեսավ 2009 թվականին, թարգմանությամբ Մարինա Բազաեւայի, խմբագրությամբ եւ առաջաբանով Լեւոն Լաճիկյանի, հովանավորությամբ Հայ օգնության ֆոնդի: Գրքի հայերեն թարգմանության առաջին ներկայացումը տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Կոմիտասի անվ. դահլիճում, փոխտնօրեն Սուրեն Մանուկյանի ողջույնի խոսքով: Ապա ՀՕՖ-ի մամլո քարտուղար Լեւոն Լաճիկյանը հակիրճ, բայց գեղեցիկ ներկայացրեց սույն հուշագրությունը, դրա պատմական, ազգային եւ գեղագիտական արժեքները:

Այսուժեսային երկու գծերի զուգահեռ զարգացումները կազմում են հուշագրության առանցքը՝ մի կողմից պատմական անցյալի, 1915-ի եղերական իրադարձությունների մոր՝ Եսթերի նկարագրություններով, մյուս կողմից դստեր՝ Մարգարիտ Ազեմյանի մեկնաբանություններով: Հուշագրությանը բնորոշ այս պատումն էլ ձեռք է բերում անմիջական շարադրանքի հատկանիշներ՝ խոսքը դարձնելով կենդանի, պատկերը՝ արտահայտիչ, ընթերցողականը զուգորդելով տարածաշարժական ընկալմանը: Գրքի շատ դրվագներ հուշում են բանախոսին դիպաշարի էկրանավորման գաղափարը, որի իրականացնող նա տեսնում է նման թեմաների լավագույն մեկնաբան Ատոմ Էգոյանին:

«Շնորհիվ գեղեցիկ շարադրանքի եւ կենդանի ոճի, «Դռան թակոցը» հատում է փաստագրության սահմանները՝ անցնելով գեղարվեստականի ոլորտը: Դրանով հուշագրական այս գործը ձեռք է բերում ընդհանրական շերտեր եւ վերածվում եղեռնի թեմայով գեղարվեստական հուզիչ դրսեւորման: Մեկ օրինակ միայն, որ կարելի է կոչել զուգահեռ աղոթասացության դրվագ. սենյակի մի կողմում հնչող մահմեդական երգեցողության հնչյունների ներքո հակառակ կողմում առ Քրիստոս իր աղոթքներն է կամացուկ մրմնջում հայ աղջնակը»:

Զգայական-հուզական շերտերից, սակայն, առավել կարեւորը գրքի վավերական արժեքն է, որպես ականատեսի վկայություն: Լեւոն Լաճիկյանը 5 տարի առաջ անցնելով, հասնելով Հայոց ցեղասպանության մեկդարյա տարելիցին, երբ այլեւս 15-ի գեհենից մազապուրծ որեւէ ականատես հազիվ կենդանի մնացած լինի, գտնում է, որ վերջին վերապրողների այսպիսի հուշերը մասունքի արժեք են ձեռք բերում: Եվ ոչ միայն. նա վստահ է, որ Փիթեր Բալաքյանի, Մերջրի Հովսեփյանի եւ մյուսների՝ Հայոց ցեղասպանության թեմայով ստեղծագործությունների «հիշողության մտավորականացում» այս շարժումը մեծապես նպաստեց ճանաչման գործընթացին:

Հուզիչ էր գրքի հեղինակի խոսքը՝ հնչած դահլիճի թույլ լուսավորության խորհրդավորության մեջ: Մարգարիտ Ազեմյան-Ահներքը Նյու Յորքում ծնված, արվեստագիտական կրթությամբ մտավորական է, արվեստի պատմություն է դասավանդել դպրոցներում, դասախոսել Նյու Յորքի Մետրոպոլիտենի եւ Ֆիլադելֆիայի Արվեստի թանգարաններում:

Առաջին անգամ մոր հետ Հայաստան այցելել է 1979-ին: «Մայրս՝ Եսթեր Միներաճյանը, քաջ եւ զորավոր կին էր. դիմացավ հայերի ջարդին. պետք է միշտ հիշենք այս ցավը: Հայերը, ԱՄՆ գալով, իրար ասում էին. «Մոռցիր»: Այս «մոռցիր» բառը սիրեց, որ աշխարհն ալ մոռանա հայերիս: Սակայն պիտի չմոռանանք, պիտի հիշենք: 95 տարի է անցել, գուցե եթե տարիներ չկորցնենք, այսքան երկար չսպասենք ցեղասպանության ճանաչմանը»:

Հիշողությունների այս թակոցը չմոռանալու պատգամ է՝ մեզ եւ եկող սերունդներին: «Կանգ չեմ առնելու, ասում է նա, թեեւ սպառնում են եւ հաճախ անվտանգության պաշտպանի կարիք եմ զգում»:

...Իսկ այստեղ Հայաստանում, այդ դահլիճում իրեն աղաղով է զգում, իր Եսթեր մոր նման, երբ հայ տեսնելիս ասում էր՝ «արյունս կխաշե»...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

AZG NEW PDF.qxd 31/03/2010 22:44 Page 1

11 տարի անց «Բավարիան» վրեժխնդիր եղավ

Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչ երկու հանդիպումներից առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Մյունխենում կայացած «Բավարիա»-«Մանչեսթր Յունայթեդ» մրցախաղը: Ֆուտբոլասերների հիշողություններում դեռևս թարմ են 1999-ի եզրափակիչում այդ թիմերի մասնակցությամբ ծավալված իրադարձությունները, երբ պարտվելով 0-1 հաշվով, անգլիացիներն ավելացված ժամանակում Սուլշերի ու Շերինգհեմի գոլերի շնորհիվ նվաճեցին պատվավոր մրցանակը:

Եվ ահա 11 տարի անց «Բավարիան» յուրօրինակ ռեանշի հասավ մրցակցի նկատմամբ: Արդեն 2-րդ րոպեին Ռունին «Մանչեսթր Յունայթեդին» հաշվի մեջ առաջ մղեց: Բաց թողած արագ գոլը չընկճեց գերմանացիներին, որոնք նախ Ռիբերիի տուգանային հարվածով վերականգնեցին հավասարակշռությունը, ապա ավելացված ժամանակում կորզեցին հաղթանակը Օլիչի խփած գոլի շնորհիվ:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Լուի վան Գալ («Բավարիա»)-Զարմանալի էր, որ մենք արագ գոլ բաց թողեցինք: Սակայն զարմանալի էր նաեւ, թե ինչպես խաղացինք եվրոպական ֆուտբոլի ուժեղագույն ակումբներից մեկի դեմ: Դեռեւս առաջին խաղակեսին տիրեցինք նախաձեռնությանը: Հպարտանում եմ իմ սաներով, որոնք բոլոր ուժերը ներդրեցին, ակտիվ գրոհում էին: Մենք իրոք արժանի էինք հաղթանակին: Բաց թողած արագ գոլն իսկական շոկ էր մեզ համար, որից դուրս գալու համար 10 րոպե պահանջվեց: Դրանից հետո մենք հաջող խաղացինք: Իհարկե, մեր բախտը բերեց, որ Ռիբերիի տուգանային հարվածից հետո գնդակը դիպչելով Ռունիին, փոխեց ուղղությունն ու հայտնվեց դարպասում: Սակայն հետագայում Օլիչը փայլեց իր վարպետությամբ եւ խփեց հաղթական գնդակը: Մենք հնարավորություն ունենք Մանչեսթրում հասնելու ցանկալի արդյունքի: Մենք կարող ենք հյուրընկալվելիս գոլ խփել որեւէ խաղում:

Ալեխս Ֆերգյուսոն («Մանչեսթր Յունայթեդ»)-Ինքներս ենք մեղավոր պարտության համար: Այնքան էլ լավ չէինք խաղում, հաճախակի էինք կորցնում գնդակը: Ճիշտ է, «Բավարիան» այս խաղում ուժեղ էր: «Օլդ Տրաֆորդում» այլ խաղ կընթանա: Կասկած չկա, որ մենք սեփական հարկի տակ մեզ լավ կդրսեւորենք ու կաշխատենք ռեանշի հասնել: Մրցակցի դաշտում խփած գոլը մեզ որոշ առավելություն է տալիս: Բնականաբար, ձգտելու ենք հաղթել: Ռունիի վնասվածքը հուսով եմ լուրջ չէ:

Ֆրանսիական երկու ակումբների՝ «Լիոնի» եւ «Բորդոյի» մրցավեճն ավարտվեց դաշտի տերերի հաղթանակով (3-1): «Լիոնի» հաղթանակում մեծ էր Լիսանդրոյի ներդրումը, ով 2 գոլ խփեց:

Մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Կլոդ Պյուել («Լիոն»)-Դիտարժան խաղ ստացվեց: «Բորդոն» մտադրվել էր գոլ խփել եւ դա թիմին հաջողվեց: Սակայն մենք շարունակում էինք մեր կամքը թելադրել մրցակցին: Թեեւ հաղթանակին, մրցակցության ելքը որոշված չէ: «Բորդոն» ընդունակ է մեզ տիաճություն պատճառել սեփական հարկի տակ: Պատասխան խաղում մեզ չեն կարող օգնել Լիսանդրոն ու Սիդնեյ Գովուն, իսկ ահա «Բորդոյում» շարք կվերադառնա Ալու Դիարան:

Լորան Բլան («Բորդո»)-Երկու արագ գոլերի շնորհիվ բաց ֆուտբոլ ընթացավ: Երեւի զարմացնեմ ձեզ, նշելով, որ չնայած պարտությանը, գոհ եմ սաներիցս: Վաղուց նրանց կատարմամբ նման խաղի ականատես չէի դարձել: Հանդիպումն առաս էր գոլային պահերով եւ կարող էին ավելի շատ գնդակներ խփվել: Սակայն դարպասապահները հիանալի խաղացին:

Հեյ-Վալուեւ նոր մենամարտի անցկացումը չի բացառվում

Բացառված չէ, որ ամռանը գերծանր քաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Դեւիդ Հեյը ռեանշ-մենամարտ անցկացնի Նիկոլայ Վալուեւի հետ: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե շաբաթ օրը Դեւիդ Հեյը հաղթի ամերիկացի Ջոն Ռուիզին:

Մրցակիցների միջեւ առաջին մենամարտի անցկացման պայմանագրում կետ կար ռեանշ-մրցամարտի հնարավորության մասին: Հիշեցնենք, որ հենց Դեւիդ Հեյն էր Վալուեւից խլել WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Վալուեւի համար նոր մենամարտը հնարավորություն կստեղծի ոչ միայն ռեանշի հասնել մրցակցի նկատմամբ, այլեւ պատժելՀեյին իրեն հասցրած վիրավորանքների համար: Սակայն մասնագետների մեծամասնության կարծիքով դա Վալուեւին չի հաջողվի: Ավելին, շատերի կարծիքով արդեն ժամանակն է, որ ռուսաստանցի բռնցքամարտիկը հեռանա ռինգից: Ճիշտ է, բոլորովին վերջերս Վալուեւը Դոն Քինգի միջամտությամբ հրաժարվել էր Վիտալի Կլիչկոյի հետ մենամարտի հրավերից, գտնելով, որ 1 մլն դոլար պարգեւավճարը քիչ է:

Իսկ ահա Մեծ Բրիտանիայում փորձում են Դեւիդ Հեյին ներկայացնել որպես հոչակավոր չեմպիոն: Հանրահայտ բռնցքամարտիկ Ռիկի Հատոնի կարծիքով Հեյը նույնիսկ գերազանցում է Լենոքս Լյուիսին: Հեյի գլխավոր առավելությունն արագաշարժությունն է, ինչը Լյուիսին անհրաժեշտ չէր, քանի որ նա հաղթում էր իր հուժկու հարվածների շնորհիվ:

Եթե մենամարտը կայանա, ապա ամենայն հավանականությամբ կանցկացվի Անգլիայում, քանի որ ԱՄՆ-ում նրանց մրցամարտը ոչ մեկին չի հետաքրքրի: Հեյը մշտապես հայտարարում է, որ հոչակավոր չեմպիոն է, սակայն ամեն կերպ խուսափում է Կլիչկո եղբայրների հետ հանդիպելուց:

«Հավանաբար հարկ կլինի այլ կերպ մենամարտել Ռուիզի հետ: Սպասում եմ, որ նա կփորձի մշտապես ճնշում գործադրել իմ վրա, ներքաշել բաց մենամարտի մեջ: Դա ինձ դուր է գալիս: Կարծում եմ, Ռուիզը մարտ վարելու հատուկ ծրագիր կմշակի: Սակայն ես կգտնեմ հակախաղը եւ կկարողանամ հաղթել նրան նոկաուտով», նշել է Դեւիդ Հեյը:

Մրցանակները գտան տերերին

Մայամիում ընթացող թենիսի մրցաշարի ժամանակ կայացել է 2009-ի մրցաշրջանի դափնեկիրների պարգեւատրման արարողությունը:

«Տարվա լավագույն թենիսիստուհի» մրցանակը հանձնվել է ամերիկացի Սերենա Ուիլյամսին, որն անցյալ տարի հաղթող էր ճանաչվել «Մեծ սաղավարտ» մրցանակի երկու մրցաշարում՝ Ավստրալիայի բաց առաջնությունում եւ Ուիմբլդոնում: Եվս մեկ մրցանակ Սերենան ստացավ քրոջ՝ Վինուսի հետ որպես տարվա լավագույն զույգ: 2009-ին նրանք շահել էին զուգախաղը Ուիմբլդոնում եւ ԱՄՆ-ի բաց առաջնությունում:

Բելգիացի Կիմ Կլիյստերսը ստացավ «Տարվա վերադարձ» մրցանակը, իսկ նրա հայրենակցուհի Յանինա Վիկմայերին հանձնվեց հատուկ մրցանակ ամենամեծ առաջընթացի համար: Տարվա լավագույն նորեկ է ճանաչվել ամերիկացի Մելանի Ուդինը: «Հանդիսականների համակրանք» մրցանակին արժանացավ ռուսաստանցի Ելենա Դեմենտեւան մենախաղում, իսկ զուգախաղում այն հանձնվեց Ուիլյամս քույրերին:

ՇԱԽՄԱՏ

Կարեն Մովսիսյանը գերազանց է մեկնարկել

Իսպանական Սան Սեբաստիան քաղաքում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում, որում հանդես են գալիս 142 շախմատիստներ, հաջող է մեկնարկել Կարեն Մովսիսյանը: Հայ գրոսմայստերը 3 միավորով Եվգենի Գլեյզերովի, Դանիել Ալսինայի, Պաբլո Սան Սեգունդոյի, Ռուսլան Պոգորելովի, Մարկո Տրաստարի, Արամիս Ալվարեսի եւ Յոահիմ Թոմասենի հետ գլխավորում է առաջատարը:

2530 վարկանիշ ունեցող հայ գրոսմայստերը երեք անընդմեջ հաղթանակ է տոնել՝ պարտության մատնելով իռլանդացի Բրենդան Լիոնսին, գերմանացի Թիմ Հագեմանին եւ դանիացի Օլե Յակոբսենին: 4-րդ տուրում Մովսիսյանի մրցակիցը կլինի կուբացի Արամիս Ալվարեսը:

ՀՀ հավաքականի նահանջը շարունակվում է

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը եւս 3 հորիզոնականով նահանջել է ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում, որ հրապարակվել է երեկ: Մեր ընտրանին 292 միավորով 106-րդ տեղում է՝ Կորեայի Դեմոկրատական Հանրապետության եւ Ռուանդայի հավաքականների հարեւանությամբ:

ՖՈՏՈ ԱՐՔԻՎԻ

2012-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի մրցակիցներից ամենաբարձր վարկանիշ ունի Ռուսաստանի ընտրանին: Ռուսները պահպանել են իրենց տեղը 12-րդ հորիզոնականում: 2 տեղով նահանջել է Սլովակիայի հավաքականը՝ հանգրվանելով 33-րդ հորիզոնականում: Իռլանդացիները, որոնց հետ երեւանյան հանդիպումով մեր հավաքականը սկսելու է ընտրական մրցաշարը, 5 հորիզոնականով նահանջել են եւ զբաղեցնում են 44-րդ տեղը: 65-րդ տեղում ընթացող մակեդոնացիներն էլ մեկ հորիզոնականով նահանջել են: Ամենացածր ցուցանիշն ունի Անդորրայի հավաքականը, որը ՖԻՖԱ-ի անդամ 207 երկրների ցանկում 201-րդն է: Ընդ որում անդորրացիները մեկ հորիզոնականով առաջադիմել են:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների երկրներից ռուսներից հետո 2-րդ ցուցանիշն ունի Ուկրաինայի հավաքականը, որը 26-րդ տեղում է: Ադրբեջանցիները 110-րդն են, իսկ Վրաստանի հավաքականը 6 հորիզոնականով առաջադիմել է եւ զբաղեցնում է 118-րդ տեղը:

Դասակարգման ցուցակի առաջատար եռյակը պահպանել է դիրքերը: Ցուցակը շարունակում են գլխավորել Եվրոպայի չեմպիոն իսպանացիները, որոնց հաջորդում են Բրազիլիայի եւ Հոլանդիայի հավաքականները: Շրջանցելով Իտալիայի եւ Գերմանիայի հավաքականներին, պորտուգալացիները զբաղեցնում են 4-րդ հորիզոնականը: 7-րդ տեղում են անգլիացիները, որոնք պահպանել են իրենց դիրքերը: Ֆրանսիացիները տեղափոխվել են 8-րդ հորիզոնական, արգենտինացիները մնացել են 9-րդ տեղում, իսկ լավագույն տասնյակը եզրափակել է Խորվաթիայի հավաքականը՝ տասնյակից դուրս մղելով հույներին:

Ֆեռնանդեսը կմարզի իսրայելցիներին

Ֆրանսիայի ֆուտբոլի հավաքականի նախկին կիսապաշտպան եւ ՊՍԺ-ի նախկին գլխավոր մարզիչ Լուիս Ֆեռնանդեսը նշանակվել է Իսրայելի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ: Այդ պաշտոնում նա կփոխարինի Դրոր Կաշտանին: 50-ամյա Ֆեռնանդեսի առջեւ խնդիր է դրվել Եվրո-2012-ի ուղեգիր նվաճել: Հիշեցնենք, որ Իսրայելի հավաքականն ընդգրկված է ընտրական «F» խմբում, որտեղ մրցելու է Խորվաթիայի, Հունաստանի, Լատվիայի, Վրաստանի եւ Մալթայի հավաքականների հետ:

Լուիս Ֆեռնանդեսը ծնվել է իսպանական Անդալուզիայում: Հանդես է եկել ՊՍԺ-ում, «Ռասինգում» եւ «Կաննում»: Ֆրանսիայի հավաքականում անցկացրել է 60 խաղ: Ֆուտբոլիստի կարիերան ավարտելուց հետո մարզչական աշխատանք է կատարել «Կաննում», ՊՍԺ-ում, Բիլբաոյի «Ատլետիկում», «Էսպանյոլում», Քաթարի «Ալ Ռայանում», Իսրայելի «Բեյթարում», «Բեթիսում» եւ «Ռեյմսում»:

«Միլանը» կխզի պայմանագիրը Կալաձեի հետ

«Միլանը» համաձայնության է եկել վրացի ֆուտբոլիստ Կախա Կալաձեի հետ ամռանը պայմանագիրը չեղյալ հայտարարելու հարցում: 32-ամյա ֆուտբոլիստն ընթացիկ մրցաշրջանում ընդամենը 6 անգամ է խաղադաշտ մտել: Նա դժգոհ է, որ զրկված է խաղային պրակտիկայից: Կալաձեի պայմանագրի ժամկետը «Միլանի» հետ ավարտվում է 2011-ի հունիսին: Պայմանագրի խզման համար նա 3,2 մլն եվրո փոխհատուցում կստանա: Վրացի ֆուտբոլիստը, որ «Միլանում» 9 մրցաշրջան է անցկացրել, կարիերան հնարավոր է շարունակի Հունաստանում կամ Թուրքիայում:

Կաղելոյին գոլֆը ՌԴ հավաքականից ավելի հետաքրքրական է

Ֆուտբոլի Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կաղելոն եւս երկու տարով կերկարաձգի պայմանագիրը երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ: Դա հնարավորություն կընձեռի անվանի մարզչին Անգլիայում շարունակելու իր սիրած գործը՝ գոլֆ խաղալ: Այդ խաղի նկատմամբ Կաղելոյի սերն անսահման է: Իտալացի մասնագետը շաբաթը մի քանի անգամ գոլֆ է խաղում: Նրա ընկերների տեղեկացմամբ Կաղելոն ժամերով խոսում է գոլֆի մասին:

Կաղելոն մինչեւ Անգլիա ժամանելն էր գոլֆ խաղում, իսկ մառախլապաս Ալբիոնում սիրած մարզաձեւով զբաղվելու ավելի մեծ հնարավորություններ կան: Ինչպես տեղեկացրել ենք, ՌԴ ֆուտբոլային միության նախագահ Սերգեյ Ֆուրսենկոն Լոնդոնում հանդիպել էր Կաղելոյի հետ եւ առաջարկել ապագայում համագործակցել: Սակայն Կաղելոն խուսափել էր բանակցելուց: Անգլիայում իտալացի մարզիչն իրեն լավ է զգում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 31/03/2010 22:44 Page 1

ԱՊՐԻԼԻ 1

Աշխարհի բոլոր գրիկներ՝ միացեք...

Այդ խորագիրն է կրում անդրանիկ «Բիսս» երգիծական ամսաթերթը, որը նախօրեին ապրիլմեկյան տոնակատարությունների նախաձեռնող խումբը ներկայացրեց ԶԼՄ-ներին: Ինչպես նշեց Սամվել Բաղդասարյանը, ապրիլմեկյան միջոցառումներին հրավիրել են նաեւ երկու մեր հայրենակիցներին, որոնք իրենց հումորային համարներով հանդես կգան ապրիլի 1-ին ժամը 20 անց 1 րոպեին սկսվող տոնակատարությանը: Նրանք են՝ Լոնդոնի կոմեդիայի կենտրոնի հումորի ժանրի հայտնի դերասան լոնդոնահայ Գեւորգ Օրյանը եւ ՌԴ-ից Մոսկովյան հեռուստաթատրոնի դերասան Կարեն Ավանեսյանը: Հումորի օրվա միջոցառումների ցանկում ընդգրկվել են երգիծանկարների հանրապետական ցուցահանդես «Մոսկվա» կինոթատրոնի շենքում ժամը 12.00-ին, երգիծաբանների ցուցահանդեսը նույն վայրում կբացվի ժամը 13.00-ին, «Մանիկեն» ֆիլմի առաջին ցուցադրությունը ժամը 13.30-ին, Հայաստանյան փոփոխությունների թատրոնը գեղագիտական ազգային կենտրոնի թատերաբեմում կներկայացնի «Բոլոր երեխաներն էլ կարող են» ներկայացումը ժամը 14.30-ին, իսկ 15.00-ին Նորքի տուն-ինտերնատում կանցկացվի տոնական ցերեկույթ տարեցների համար, 15.30-ին Հ. Թումանյանի անվ. տիկնիկային թատրոնի փոքր դահլիճում՝ ածպարարական շոու միտսր Մոգի կատարմամբ, 16.00-ին նույն վայրում մնջախաղի զվարճալի ծրագիր, 16.30-ին՝ ծիծաղաբարժ լուսանկարների ցուցահանդես՝ Հյուսիսային պողոտայում, 17.00-ին Կոմեդիայի պետ. թատրոնում «Այ-յայ-յայ» զվարճալի ծրագիր, 18.00-ին բացօթյա հանդիսություն օդերային հարող տարածքում, 19.00-ին Կամերային թատրոնը ներկայացնում է «Կաբարե» ներկայացումը, իսկ միջոցառումների մեխը՝ 20 անց 1 րոպեին սկսվող տոնախմբությունն է, որը կրում է «Մեկից-մեկ» խորագիրը: Ապրիլմեկյան միջոցառումները անցկացվում է ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո: Մեզանում առաջին անգամ այդքան համով-հոտով ասուլիս, լեցուն անակնկալներով չէր եղել: Եթե նախատոնը այսքան տոնական ու գեղեցիկ էր, մնում է, որ գուշակենք, թե ինչպիսի հեստրքրական ու ծիծաղկոտ է անցնելու ապրիլի մեկը: Հումորի ու ծիծաղի մեծերը իրենց 1 րոպեանոց խոսքը նվիրեցին մեզ ու մաղթեցին «ինչքան միս են ուտում, այնքան էլ ծիծաղենք, ծիծաղը կյանք է երկարացնում»: Ծիծաղե՛ք, ծիծաղե՛ք եւ էլի լիաթո՛ք ծիծաղեք:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ձեւ N1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01. 01. 2010

ծածկագիրը

Կազմակերպության անվանումը	«Ժ. Գ. Ա.» ՍՊԸ
Փաստացի գործունեություն	Խաղասրահ
հիմնական երկու տեսակները	
Պետռեգիստրում գրանցման համարը	29011002786
Հարկ վճարողի հաշվառման համարը	01833037
Ցափի միավորը	հազ. դրամ
Գտնվելու վայրը	ք. Երեւան, Անդրանիկի 64 շ., 29 բն հեռախոսը
Փաստացի գործունեության իրականացման վայրը	Զովունի 1-ին փող, 150/1 շ.

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	1163	1163
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	1163	1163
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	54	20
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	16156	1182
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	16210	1202
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	17373	2365

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	50	50
Կուտակված շահույթ	270	12146	(506)
Ընդամենը սեփական կապիտալ	300	12196	(456)
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	380	100	400
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	2550	2140
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	201	146
Այլ կրեդիտորական պարտքեր	450	270	135
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480	2056	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	5177	2821
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	17373	2365

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2009 թ.,

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորդական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորդական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	64685	34915
Համախառն շահույթ (վնաս)	030	64685	34915
Վարչական ծախսեր	050	(52539)	(45421)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	12146	(10506)
Գործառնական շահույթ (վնաս)	090	12146	(10506)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	12146	(10506)
Զուտ շահույթ (վնաս) նախան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	12146	(10506)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	12146	(10506)

Ղեկավար՝ Գլխավոր հաշվապահ՝

Կ. Տ.

ՕԱՆՈՒՅՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ քաղաքացիներ

ՀՀ կառավարության 30.10.2008թ. N1330-Ն որոշմամբ հաստատված կարգով անցկացված վիճակահանությունների արդյունքում չշահած՝ 2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում տրամադրված ՀԴՄ կտրոնների խմբաքանակների դիմաց բոնուս ստանալու նպատակով 2010թ. ապրիլի 1-ից կարող եք դիմել «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի, «ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի, «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի եւ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակներ եւ մասնաճյուղեր, որոնց վերաբերյալ մանրամասներին կարող եք ծանոթանալ հարկային ծառայության՝ «www.taxservice.am» կայքում:

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ACBA-CREDIT AGRICOLE BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԸ հայտարարում է աճուրդ՝ Բանկի մասնաճյուղերին պատկանող մեքենաների վաճառքի համար: Ցանկացողները կարող են դիմել համապատասխան հեռախոսահամարներով:

Մակնիշ՝ ՎԱԶ-21213
Արտադրության տարեթիվ՝ 2000թ.
Կատարված վազք՝ 243,100 կմ
Սկզբնական արժեք՝ 800,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0222) 3 32 96
Բանկի «Կոտայք» մասնաճյուղ

Մակնիշ՝ ՎԱԶ-21213
Արտադրության տարեթիվ՝ 2001թ.
Կատարված վազք՝ 208,700 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0224) 2 27 54
Բանկի «Եղվարդ» մասնաճյուղ

Մակնիշ՝ ՎԱԶ-21213
Արտադրության տարեթիվ՝ 2002թ.
Կատարված վազք՝ 253,324 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0267) 2 40 11, 2 40 12
Բանկի «Բերդ» մասնաճյուղ

Մակնիշ՝ ՎԱԶ-21213
Արտադրության տարեթիվ՝ 2000թ.
Կատարված վազք՝ 288,400 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0284) 2 40 18, 2 40 94
Բանկի «Գորիս» մասնաճյուղ

Մակնիշ՝ ՎԱԶ-21213
Արտադրության տարեթիվ՝ 2002թ.
Կատարված վազք՝ 210,000 կմ
Սկզբնական արժեք՝ 700,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0236) 4 47 66
Բանկի «Մասիս» մասնաճյուղ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Մրցույթի ծածկագիրը՝ ԼՂ/Գ-1/10

Պատվիրատու՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երեւան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն կանցկացվի է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ԼՂՀ Շուշիի շրջանի կենտրոնական գրադարանի շենքի վերանորոգման-վերակառուցման աշխատանքների իրականացման պայմանագիր:

Գնման առարկա է հանդիսանալու ԼՂՀ Շուշիի շրջանի կենտրոնական գրադարանի շենքի վերանորոգման-վերակառուցման աշխատանքները:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 15.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին և դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. ապրիլի 6-ից մինչև ս.թ. ապրիլի 28-ը, ժամը 10.00-ից մինչև 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գևորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչև ս. թ. ապրիլի 30-ը, ժ. 11.00-ը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն Երեւան քաղաքի լարային ռադիոցանցի բաժանորդների

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ Երեւանի լարային վերահաղորդիչ ռադիոցանցից օգտվող բոլոր բաժանորդները, սկսած ս.թ. ապրիլի 1-ից, իրենց աբոնենտային վճարները պետք է կատարեն բացառապես «Հայփոստի» կամ «ՎՏԲ-Հայաստան» բանկի բաժանմունքներում, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի Աղասյան մ/ճ, թիվ 2474 6011 7994 0080 հաշվեհամարին:

Կոնտակտային հեռախոս՝ 010 53 44 12

«ՀՀՌՑ» ՓԲԸ ադմինիստրացիա

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՍՑԵ ՕԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 31.03.2010, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: